

*Նվիրում եմ հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտի քառասնամյակին*

## Արտաշես Քալանթարյան

### ԹԻՎՈՒՆՔ

(ԴՐԱՄԱ)

#### ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

1. ՎԱՀՐԱՄ – Գործարանի բանվոր, 50 տարեկան
2. ՄԻՐԱՆ – Նրա կինը, 48 տարեկան
3. ՑՈԼԱԿ –
4. ՏԻԳՐԱՆ – Նրանց որդիները 17 և 14 տարեկան
5. ՄԱՐՈ – Նրանց ավագ որդու՝ Մելիքի հարսնացուն, 18 տարեկան
6. ՆԱԶԻԿ – Հարևանուհի, գործարանի բանվոր, 35 տարեկան
7. ՄԱԹԻԿ – Նրա դուստրը՝ աշակերտուհի, 14 տարեկան
8. ԼԻԶԱ – Հարևանուհի, 27 տարեկան
9. ԲԵՐՄԱԲԵ – Հարևանուհի, 55 տարեկան
10. ՎԱՐԴԱՆՅԱՆ – Ինժեներ, 45 տարեկան
11. ՊԱՌԱՎ ԿԻՆ

*Գործողությունը տեղի է ունենում հայրենական մեծ պատերազմի տարիներին, Երևանում*

*Տեքստի մեջ միտումնավոր ընդգծված են այն բառերը, որոնք օտար են, սակայն ժողովուրդն օգտագործում էր պատերազմի տարիներին՝ առօրեական խոսակցության մեջ:*

*Հեղինակ*

## ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

*(Շենքի տանիքը)* Մի կողմը գրեթե բաց է: Երևում է երկինքը: Մյուս կողմը խավարի մեջ է: Տանիքում ամեն ինչ կա՝ օդային հարձակումից և ֆուգասային ռումբերից շենքը պաշպանելու համար՝ կրակմարիչներ, ավագ, կարմիր գույնի դուլլեր, բահեր, հակագազներ, ջրով լի մի մեծ բաք: Դիմացի պատին պլակատներ են՝ «Մայր հայրենիքը կանչում է», «Եղեք զգոն - թշնամին ամենուրեք ականջներ ունի» և Եվրոպայի քարտեզը, կարմիր դրոշակիկներով, որոնք նշում են ռազմաճակատի գիծը:

Առաջին պլանի վրա կոշտ ու կոպիտ փայտե սեղան է, աթոռակներ, թախտ:

Երբ վարագույրը բացվում է, բեմը դատարկ է: Սակայն ինչ-որ տեղից խուլ հեկեկոց է լսվում: Հատակին բացված քառակուսի անցքից, երկաթե սանդուղքով բարձրանում և հայտնվում է Նազիկը: Հեծկլտոցը կտրվում է: Նազիկի հագին չթե կարկատած, գունաթափ շոր է, մազերին դարձյալ չթե գլխաշոր:

Նա ձեռքի թեյնիկը դնում է սեղանին, մոտենում է տանիքի բաց մասին, նայում, հետախուզում է երկինքը, գալիս նստում է սեղանի մոտ, թեյնիկից տաք ջուր է լցնում այլումինե բաժակի մեջ, մի կում է անում և մոտ է բերում սեղանի վրա ընկած թուղթը: Կարդում է հեզելով:

ՆԱՋԻԿ - «Կը-կարդա և տարածի»: Յա, սա՞ որտեղից: Եվ ինչպես գրված է սուրբ գրքում, կլինի անհեղ դատաստան և կոտորած, սով կլինի ամենուրեք և ժանտախտ, հայրը կուրանա որդուն և որդին՝ հորը, եղբայրը եղբոր արյունը կուզե և նորածին երեխաները օրորոցի մեջ հաց կաղաղակեն սրտակեղեք: Տերն այդպես կպատժե անառակն ու պիղծ աշխարհը և հավատի սուրն կպարզե անհավատների գլխի վրա... Ինչ էլ անճոռնի ձեռագիր է...

«Մ- մտեք եկեղեցիներն ու մոմեր վառեք ծնկաչոք, որ տերը մեր գթա ձեզ...

Աղոթեք, մոլորյալներ, աղոթեք...

(Վախեցած նայում է զգոնություն կոչող պլակատին):

Սա ո՞վ բերած կլինի:

*(Նայում է շուրջը, նկատում է տանիքի քիվին թառած աղավնուն):* Վայ, աղունիկ ջան, Ցուլակի աղունիկներից ե՞ս: Հո դու չե՞ս բերել: Հոգի ջան: Չէ, ջանըմ, դու էդսպիսի հիմար բան չես անի: Մեկն ու մեկը տեսներ կորած էի: Վայ, գետինը մտնի էս բերողն էլ, տարածողն էլ: Ուրեմն էս պատերազմը մեր մեղքի համար է, հա՞, ու Հիտլերն էլ տիրոջ սուրն է պարզել, հա՞: Վայ էդ սուրը նրա քար սիրտը խրվի, որ էս իմանամ: *(Պատաստանում է թուղթը)* Ձեռքս ընկներ՝ այ էսպես պատառ-պատառ անեի, դանակով կտրտեի մանր-մանր ու աղ ցանեի, աղ ցանեի բուռ-բուռ, որ մղկտալով սատկեր, որ կրակն ընկներ վառվեր, ոնց որ էս լույս աշխարհն է վառում, ոնց որ էս աշխարհն է իրար խառնել էդ անգութ ավազակը:

*(Հեծկլտոցի ձայն է լսում)*

Է՞ս ինչ ձեն էր, ականջիս թվաց, թե...

*(Ձայնը կտրվում է)*

Բա ես... ես, աղունիկ ջան, որ սպանեիր՝ մթնով տնից դուրս չէի գա ու մի մուկ տեսնելուն պես՝ սեղանի վրա կթոչեի, հիմի գիշերները հերթապահ եմ կանգնում էս առնետանոցում, էս կտուրի տակ, որ ժուրբ հանգցնեմ... Վայ, էդ ժուրբը Հիտլերի մոր փորում պայթեր, որ նեռը լույս աշխարհի չգար... ճիշտ չի՞ ... հա՞ ...

Բայց դու էստեղ մի մնա, թո՛ղի, աղունիկ ջան, մարդկանցից հեռու մնա, որ քեզ չուտեն, ցավդ տանեն: Սոված ու գազազած են: Փիս ժամանակներ են, աղունիկ ջան ...

Դե թո՛ղի, այ ապրես դու, թո՛ղի...

*(Նորից հեծկլտոց է լսվում)*

Վա՞յ: Էստեղ մարդ կա: *(Ձեռքն է վերցնում բահը, դեպի խավարն է շարժվում)*: Ո՞վ ես, դուրս արի, դուրս արի, ասում եմ... Քեզ պարզ տեսնում եմ, էլի: Դուրս արի, քանի բահով չեմ խփել...

*(Հայտնվում է 14 տարեկան մի պատանի, արցունքոտ աչքերով)*

Տիգրա՞ն: Ի՞նչ ես անում էստեղ, այ տղա ... ի՞նչ է պատահել, ցավդ տանեն: Ձեր տունն իրար է խառնվել, քեզ են ման գալիս, դու էստեղ տապկնոցի ես խաղո՞ւմ: Ի՞նչ է եղել, ախպեր ջան...

ՏԻԳՐԱՆ - *(Ավելի ուժեղ հեկեկալով)* Ես ուզում եմ մեռնել, Նազիկ մորքուր:

ՆԱԶԻԿ - Քոռանամ ես, էդ ինչե՞ր ես ասում, այ բալա: Ի՞նչ է պատահել...

ՏԻԳՐԱՆ - Հացի քարտերն եմ կորցրել...

ՆԱԶԻԿ - Ի՞նչ, ի՞նչ... *(ծնկներին է խփում)* Էս օրվա՞ ...

ՏԻԳՐԱՆ - Ամբողջ ամսվա, ամբողջ ամսվա... մթերային քարտերն էլ հետը...

ՆԱԶԻԿ – Վախ, վախ, վախ, էդ ի՞նչ անբախտություն է, էդ ո՞նց արեցիր, արևիդ մեռնեմ, գողացա՞ն...

ՏԻԳՐԱՆ - Չգիտեմ: Գնացի գործարան... ստացա: Դրեցի մայկայիս մեջ... Հետո տրամվայ նստեցի... Անընդհատ ձեռք էի տալիս, ճոճում էր... Հետո որ տպարանի մոտ իջա, մեկ էլ ձեռք տվեցի... ու մեկ էլ տեսա, որ չի ճոճում... Էլ չիմացա, թե ինչ եմ անում,

մորքուր, ընկա տրամվայի առաջ, գծերի վրա... Ուստա Հայրոն որ չլիներ... Երկրորդ հերթ էր... ինձ տուն բերեց, նոր գնաց... Բայց դե ոնց տուն մտնեի, ոնց նայեի մերոնց...

Դռան մոտ կանգնեցի, կանգնեցի ու վերև փախա ...

ՆԱԶԻԿ - Վախ, վախ, վախ, բա մի ամիս ի՞նչ էք անելու, ցավդ տանեմ: Վայ քո անբախտ հորն ու մորը: Իբրև թե շատ ուրախություն ունեին: Սուգ է ընկնելու տունը: Ձեռքդ անընդհատ վրան պահեիր, էլի, այ բալա...

ՏԻԳՐԱՆ - Պահել էի, Նազիկ մորքուր, ձեռք էի տալիս, ճոճում էր ու մեկ էլ...

ՆԱԶԻԿ - Դե լավ, լավ, արի քեզ տուն տանեմ...

ՏԻԳՐԱՆ - Չէ, չէ, չեմ գա...

ՆԱԶԻ - Ո՞նց թե չես գա... կկարծեն թե... կկարծեն թե դժբախտություն է պատահել քեզ, այ բալա...

ՏԻԳՐԱՆ - Սրանից էլ մեծ դժբախտություն...

ՆԱԶ ԻԿ - Դե ձենդ կտրի, աղջիկ հո չես, ի՞նչ ես թնկթնկում, շուտ արա, հո գոռով քարշ չեմ տալու քեզ... Արի...

ՏԻԳՐԱՆ - Ախր ես ո՞նց մերոնց երեսին նայեմ... ի՞նչ ասեմ...

*(Անցքի միջից երևում է տիկին Բերսաբեի գլուխը)*

ԲԵՐՍԱԲԵ - Այս ի՞նչ աղմուկ է...

ՆԱԶԻԿ - Գործարան գնալուց հո սրա երեսը չէիր տեսել, Տիգրան...

ՏԻԳՐԱՆ - Տեսել էի...

ՆԱԶԻԿ - Բա էլ ի՞նչ ես ուզում: Լավ է, որ դու էլ չես կորել...

ԲԵՐՍԱԲԵ - Բավական չէ՞ իմ գլխին թփթփացնեք... Այդ ի՞նչ քաշքշուկ է...

ՆԱԶԻԿ - Տիգրանը հացի քարտերն է կորցրել, տիկին Բերսաբե... Հիմի վախենում է տուն գնա...

ԲԵՐՍԱԲԵ - Քարտերը՞ ... Որտե՞ղ ես կորցրել, Տիգրան...

ՆԱԶԻԿ - Որ ասի՝ տպարանի մոտ, սիրտդ կհանգստանա՞ ...

ԲԵՐՍԱԲԵ - Լավ էլ արել է, որ կորցրել է: Թող երեխային մյուս անգամ այդպիսի պատասխանատու հանձնարարություն չտան: Վահրամը չէ՞ր կարող բերել, Սիրանը չէ՞ր կարող բերել և վերջապես նրանց մյուսը՝ աղավիններ թոցնող Ցուակը չէ՞ր կարող բերել...

ՆԱԶԻԿ - Այ տիկին Բերսաբե, գոնե էնպիսի մարդ խոսի, որ ինքը չի կորցրել:

ԲԵՐՍԱԲԵ - Ե՞ս... բայց ես չեմ կորցրել, իմ քարտերն ուղղակի թոցրեցին, Նազիկ: Իմն ուրիշ էր: Առաջին քարտերն էին, և ես այսպես լրագրի մեջ փաթաթած տուն էի բերում: Եվ հանկարծ լսում եմ, որ իմ թիկունքում երկու երիտասարդներ խոսում են: Մեկը մյուսին ասում է՝ գիտե՞ս, ասում են, թե արդեն հացի քարտեր են բաժանում: Մյուսն էլ ասում է՝ չէ, հաջորդ ամսից են բաժանելու: Ես շրջվեցի և տեսա, որ երկու շատ համակրելի երիտասարդներ են և նրանց ասացի:

Քարտերն արդեն բաժանում են, կուզենայի՞ք տեսնել:

ՆԱԶԻԿ - Հաճույքով - ասացին այդ համակրելի երիտասարդները... շատ հետաքրքիր ...

ԲԵՐՍԱԲԵ - Այո, այո, ես նրանց մեկնեցի քարտերը... և մեկ էլ տեսա, որ նրանք վազում են... տանելով իմ քարտերը...

ՆԱԶԻԿ - Երևի տանում էին, որ ուրիշներին էլ ցույց տան...

*(Տիգրանը ակամա փոթկացնում է)*

ԲԵՐՍԱԲԵ - Եվ դեռ ծիծաղում ես, հա՞, այս պլակատը հենց քո նմանների մասին է: Բերանբաց:

ՆԱԶԻԿ - Ապրես, տիկին Բերսաբե, դու քո գործն արեցիր... Գնացինք, Տիգրան ջան...

ՏԻԳՐԱՆ - *(Նորից լաց լինելով)* Ախր ոնց գամ, Նազիկ մորքուր, գամ ի՞նչ ասեմ...

ՆԱԶԻԿ - Այ քեզ պատուհաս... *(Տանիքի բացվածքից ցած է նայում, ձայն է տալիս)* Լիզա, Լիզա... մի վերև բարձրացիր... *(Տիգրանին)* նա քո հախից կգա...

*(Անցքից բարձրանում է հաստամարմին, բարձրահասակ մի կին):*

ԼԻԶԱ - Ինչ ա, ի՞նչ ա...

ՆԱԶԻԿ - Էս տղին գրկի ու իջեցրու, Լիզա ջան...

ԼԻԶԱ - Տիգրա՞ն: Չտո՞ւ սլուչիլու...

ՆԱԶԻԿ - Հացի քարտերն է կորցրել... Քո Հայրոն է գոռով բերել տուն...

ԼԻԶԱ - Վայ, տեր աստված... Կակոյն նեսչասոյե, բեդնայա Սիրան... Չտո բուդիմ դելատ: Կակ մի ժիտ բուդեմ: Վայ, տեր աստված: Նու, խորոշո, խորոշո, նե պլաչ, սինոկ... Ռազվե գա էտո պլա չուտ... *(Լաց է լինում)*

ԲԵՐՍԱԲԵ - Տեղն է նրանց: Սիրտս այ էսքան էլ չի ցավում նրանց համար...

*(Իջնում է ցած)*

ՆԱԶԻԿ - Քո սիրտն ո՞ւմ համար է ցավում, բայդուշ...

ԼԻԶԱ - *(Տիգրանի գլուխը գրկած, ասես օրոր է ասում, լաց է լինում)* նու, նիչեվո, նե պլաչ, միլինկիյ, օյ, գորե մայո, գորե... չտո գա բեդա., չտո գա բեդա... Տի նե պլաչ, սինոկ...

ՆԱԶԻԿ – Ըհր, իբր թե կանչեցի, որ մխիթարի, հիմա մեկը լինի, սրան հանգստացնի... Լիզա, վերջ տուր, Լիզա ջան, Տիգրանին տար, այ աղջիկ... շտո, շտո, նիչեվո...

ԼԻԶԱ - *(Թողնում է տղային, դեպի բացվածքն է շրջվում, աջ ձեռքը պարզում է երկինք)*  
Բուդտե վի պրոկյաստի, բուդտե վի պրոկյաստ ի... իզվերգի...

ՆԱԶԻԿ - Այ դա ուրիշ, այ մալադեց, Լիզա... թե չէ լաց ես լինում...

*(Անցքից լսվում է գրնգուն մի ձայն)*

ՍԱԹԻԿ - Մամա, մամ... Տիգրանն է կորել... գնացել է հացի քարտե... Վա՞յ, գժի մեկը, ամբողջ տունն իրար է խառնել, հայրիկդ արդեն ուզում է գնալ, հիվանդանոցները ստուգել...

ՏԻԳՐԱՆ - *(Մղկտում է)* Ախր ես հայրիկիս ի՞նչ ասեմ, ինչ ասեմ...

*(Հնիհն բարձրանում է ուստա Վահրամը)*

ՎԱՀՐԱՍ - Ինչ ասես... շան լակոտ... մարդկանց գլխիդ ես հավաքել ու սո՞ւգ ես անում... Որ ի՞նչ... խեղճ մերդ...

ՆԱԶԻԿ - Էդ աչքալուսանքը տիկին Բերսաբեն բերեց, ուստա Վահրամ...

ՏԻԳՐԱՆ - Ներիր, հայրիկ ջան, ներիր, հայրիկ ջան, ներիր, ցավդ տանեմ...

ՎԱՀՐԱՍ - Հիմար: Ո՞վ է մեռել, որ լաց ես լինում: Գետինը չե՞ս մտնում, արդեն տղամարդ ես: Եվ վերջապես դու տուն չունե՞ս: Գնա քո տան մեջ լաց եղիր... իբրև թե քիչ է աշխարհի ցավը...

## ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

*(Վարպետ Վահրամի տունը: Սովորական սենյակ: Պատին սև, հնաժամ ռադիոն է: Երկար սեղան, աթոռներ: Թախտ, որի վերևում կարպետ է: Կարպետի վրա փակցված է Մելիքի մեծադիր նկարը, կրծքին մեղալ՝ «Խիզախության համար»:*

*Անկյունում կարի սև մեքենան է: Կողքին բամբակ ու կտորներ: Միրան մայրիկը բամբակած բաձկոններ է կարում ռազմաճակատի համար: Հիմա Միրան մայրիկը նստած է գլխահակ, անընդհատ ցած հոսող արցունքներն է սրբում: Տիգրանը կծկվել է մի անկյունում, վարպետ Վահրամը մոայլ ետ ու առաջ է քայլում սենյակում: Ռադիոն խռխռոցով ինֆորմացիոն հաղորդագրություն է կարդում՝ Ռոստովի մոտ մղվող ծանր մարտերի մասին: Սեղանին վառվում է նավթի լամպը: Լուսամուտները վարագուրված են):*

ՎԱՀՐԱՄ - *(Կանգ է առնում Միրան մայրիկի առջև)* Դե լավ, ինչ եղել է, եղել է: Չենք կոտորվի: Վերջ տուր, ասում եմ քեզ: Քեզ էլ մի մահանա է պետք լաց լինելու համար:

ՄԻՐԱՆ - Մեռնեի պրծնեի, ավելի լավ չե՞ր, տեր աստված: Բա էսքան ցա՞վ կլինի...

ՎԱՀՐԱՄ - Հասկացանք, ամոթ է, մի բան կմտածենք, հացի համար լաց չեն լինի: Երեխա հո չե՞ս:

ՄԻՐԱՆ - Հո հացի համար չեմ... Մելիքից չորս ամիս է նամակ չկա: Վահրամ ջան, էլ չեմ դիմանում... Էս քարտերն էլ... Ախր առավոտը ձեզ ի՞նչ եմ տալու...

ՎԱՀՐԱՄ - Հիմի տեսա՞ր, որ հացի համար է...

ՄԻՐԱՆ - Բա դա քի՞չ է, այ մարդ... Քե՞զ ինչ կա, առավոտ շուտ վեր կկենաս ու դուրս կգաս: Բա ես ո՞ր գնամ: Երեխեքն ախր ինձ են նայում... Ես նրանցից ո՞ր փախչեմ...

ՎԱՀՐԱՄ - Երեխաներին կվերցնես ու կգնաս գյուղ, Միրան:

ՄԻՐԱՆ - Գյո՞ւղ:

ՎԱՀՐԱՄ - Հա, լավ է, որ ամառ է, դպրոց չկա: Վեր կացեք, գնացեք գյուղ: Փիփերթ ու բանջար կքաղեք, կապրեք մի կերպ, Միրան ջան: Ինչքան մտածում եմ, ուրիշ ոչ մի հնար չկա:

ՄԻՐԱՆ - Բա դո՞ւ:

ՎԱՀՐԱՄ - Ի՞նձ ինչ կա: Մի չոր գլուխ: Յուլա կգնամ, էլի:

ՄԻՐԱՆ - Ես քեզ մենակ չեմ թողնի:

ՎԱՀՐԱՄ - Վայ, երեխաները կոտորվե՞ն, այ կնիկ:

ՄԻՐԱՆ - Եթե կոտորվելու ենք, իրար հետ կոտորվենք: Առավոտները գոնե մի բաժակ չայ եմ տալիս քեզ, եղ էլ տվող չլինի: Հետո՝ իմ տեղն ո՞վ է տելեգրեյկաներ կարելու, ո՞վ է ձեռնոցներ կարելու: Գործ են տվել բանակի համար, թողնեմ փախչե՞մ... ի՞նչ իմանաս, թե իմ կարած տելեգրեյկաներից մեկն էլ հենց իմ Մելիքին չի հասնելու... Մեռնեմ իրա արևին... Կամ թե մի թաթման՝ ախր Մելիքիս ձեռները ամառն էլ մրսում էին:

ՎԱՀՐԱՄ - Ուրիշ հնար չկա, այ կնիկ.

ՄԻՐԱՆ - Բա էս մեծ աշխարհում մեկը չկա՞, որ օգնի մեզ, այ մարդ: Գոնե պարտքով մի քիչ փող տա...

ՎԱՀՐԱՄ - Ո՞վ օգնի, բուրն էլ մեր օրին են... կամ որ փող տվեցին, փողն ինչ էս անելու, փողով ի՞նչ կարող էս առնել...

ՏԻԳՐԱՆ - Ինչի, բազարում ամեն ինչ էլ կա...

ՎԱՀՐԱՄ - Դու ձենդ կտրի... Ո՞ւմից կարող ենք փող ուզել, դու ասա...

ՄԻՐԱՆ - Ինչ ասեմ: Պատերազմից առաջ հարյուր անուն կտայի...

ՎԱՀՐԱՄ - Տեսնո՞ւմ էս...

ՏԻԳՐԱՆ - Ընկեր Վարդանյանից ուզի... Նրա Թելմանի ձեռքին երեկ հինգ հատ հարյուրանոց կար: Խաղ էր անում...

ՎԱՀՐԱՄ - Այ տղա, դու ձենդ կտրի, ասում եմ: Հլա դեռ երես ունես ու խոսո՞ւմ էս:

ՏԻԳՐԱՆ - Լավ էլի, հայրիկ, բա որ ընկեր Վարդանյանը քո գյուտերի փողերի հալալ կեսը տարավ, լա՞վ էր: Ցուլակն էր ասում:

ՎԱՀՐԱՄ - Գլուխը պատին էր տալիս Ցուլակը: Ցուլակն ի՞նչ է հասկանում՝ իր դուրսից բացի: Ցուլակը... Ցուլակը ինքը մարդ դարձավ, հիմա էլ մարդ չի հավանում, հա: Որ ընկեր Վարդանյանը գծագիրը չքաշեր, էս երկայթը պիտի ժողկոմատ տանեի՞...

ՏԻԳՐԱՆ - Ախր գծագրելն ինչ է: Ցուլակն ասում է՝ պատրաստի դետալից գծագիր հանելը երեխայի բան է, էս էլ կարող էի գծել... Դրա համար փողի կեսը վերցնո՞ւմ են: Ընկեր Վարդանյանը խաբել է քեզ:

ՎԱՀՐԱՄ - Ի՞նչ...

ՄԻՐԱՆ - Հա, Վահրամ ջան, մի ջղայնանա, բայց Ցուլակն ինձ էլ է...

ՎԱՀՐԱՄ - Բա դուք չեք ամաչում: Հլա դեռ նա մի մատ լակոտ է, չի հասկանում, բա դու, դու, Սիրան...



ՄԻՐԱՆ - Ես բան չեմ ասում, ասում եմ...

ՎԱՀՐԱՄ - Ասենք տեղներս նեղացել է; աշխարհը պիտի սևացնե՞նք : Էն մարդը ինձ տեր կանգնեց, տեր, վերցրեց գծագրեց, տարավ ժողկոմատ, հաստատեց... Էդ էլ նրա լավությունն էր: Ասում եք խաբել է: Բա դուք գետինը չեք մտնում: Ընկեր Վարդանյանը ո՞նց կարող է խաբել... նա գալստուկ է կապում:

ՏԻԳՐԱՆ - *(Արհամարհանքով)* Գալստուկ...

*(Դուռը թակում են և անմիջապես էլ բացում: Ներս է մտնում Նազիկը):*

ՆԱԶԻԿ - Բարի իրիկուն:

ՄԻՐԱՆ - Այ սև լիներ էս իրիկունը: Արի, արի, նստի Նազիկ ջան...

ՆԱԶԻԿ - Ժողովուրդ, լսե՛լ եք, որ գիժ Արամին բռնել են:

ՎԱՀՐԱՄ - Ի՞նչ Արամ...

ՆԱԶԻԿ - Գիժ Արամին, էլի, որ ամառ-ձմեռ տկլոր-տկլոր ման էր գալիս փողոցներում:

ՄԻՐԱՆ - Ինչի՞ են բռնել, այ աղջի...

ՆԱԶԻԿ - Ասում են շպիռն է եղել:

ՄԻՐԱՆ - ՕՖ, ասում ես, էլի, ուրեմն նրան ուղարկողները մի շոր չունեի՞ն, որ իրենց շպիռնին հագցնեին...

ՆԱԶԻԿ – Դե էս ինչ իմանամ. Հա, Սիրան ջան, մի ծիծաղելի բան ասեմ, բալկոնում գցած մի հին սնդուկ ունեմ: Էսօր չգիտեմ ինչի քրքրեցի, ու մեկ էլ ի՞նչ տեսնեմ...

ՄԻՐԱՆ - Ի՞նչ...

ՆԱԶԻԿ - Մի տոպրակ չոր լոբի: Ո՞վ գիտե որ թվից էր մնացել: Հո չուրախացա, հո չուրախացա, ասացի քեզ աստված ուղարկեց էսօր, լոբի ջան... Կեսդ տանեմ Սիրանին: Առ, քույրիկ ջան... Համա տոպրակս էլի ինձ կտաս :

ՄԻՐԱՆ - Ի՞նչ էս անում, քույրիկ ջան, ինչի՞ էս քո երեխաների բերանից կտրում...

ՆԱԶԻԿ - Վայ, ասում եմ՝ սա հանկարծ գտա, է... պլանից դուրս...

ՄԻՐԱՆ – Շնորհակալ եմ, քույրիկ ջան, աստված Անդրանիկին բարի վերադարձ տա ... իմ Մելիքի հետ...

ՎԱՀՐԱՄ - Էյ, Նազիկ, Նազիկ, հիշո՞ւմ ես ինչ քեֆեր էինք անում Անդրանիկի հետ: Հիմի որտեղ է ախպերս ...

ՆԱԶԻԿ - Ի՞նչ իմանամ, մեծ եղբայր, վերջին նամակը Մոզդոկ քաղաքից եմ ստացել: Նա մի տեղ նստո՞ղ է, որ մարդ իմանա տեղը... իսկի տանն էլ չէր մնում, չէս հիշո՞ւմ...

ՄԻՐԱՆ - Վայ, Նազիկ, վայ, հո լեզու չունես...

ՎԱՀՐԱՄ - Շատ է խեղճացե՞լ:

ՆԱԶԻԿ - Նրան ո՞վ կարող է խեղճացնել, մեծ եղբայր, էդ նեղ մաջալին էլ գրում է, թե՛ Նազիկ ջան, չմտածես, Գերմանիայից քեզ համար շեկ մազերով մի օգնական կնիկ եմ բերելու: Ասում են դրանք շատ տնտեսվար են, քեզ նման չեն...

ՎԱՀՐԱՄ - Օյինբազը...

ՄԻՐԱՆ – Բա դո՞ւ ինչ գրեցիր...

ՆԱԶԻԿ - Գրեցի, թե մենակ դու արի, երեխեքին տերություն արա, Անդո ջան, մնացածը քո բանը չէ, էդ գերմանացի կնկա շեկ մազերը թող ինձ...

*(ծիծաղում են)*

ՎԱՀՐԱՄ – Դե հենա ասա վախից է, որ նամակ չի գրում, էլի...

ՆԱԶԻԿ - *(Հանկարծ վշտոտ)* Էհ, մեծ եղբայր... ինչ ասեմ...

*(Դուռը թակում են, ներս է մտնում տիկին Բերսաբեն)*

ԲԵՐՍԱԲԵ - Բարև ձեզ: Ես ուղղակի ապշած եմ, Սիրան: Ինչպես կարելի էր հացի քարտերը վստահել այս միամիտ երեխային: Ինչի՞ վրա էիք հույս դրել: Կամ դուք, Վահրամ, լուրջ մարդ եք: Հիմա ի՞նչ պետք է անեք... մեկ ամիս...

ՎԱՀՐԱՄ - Մի կերպ կապրենք, էլի, տիկին Բերսաբե...

ԲԵՐՍԱԲԵ - Իսկ երեխաները... Նրանք օդով հո չե՞ն ապրելու: Սիրան, վերցրու այս շաքարը, երեխաների համար քաղցր թեյ կպատրաստես:

ՄԻՐԱՆ - Վայ, չէ, չէ, պետք չէ...

ԲԵՐՍԱԲԵ - Եթե կուզես իմանալ, շաքարն ի՞նձ պետք չէ: Պատկերացնո՞ւմ եք, մի նոր հիվանդություն է լույս աշխարհ ընկել և եկել ու հենց ինձ է կպել: Շաքարախտ է անունը:

ՆԱԶԻԿ - Էդ ո՞նց քեզանից չի փախել:

ԲԵՐՍԱԲԵ - Ինչպե՞ս: Եվ ուրեմն պարզվում է, որ ինձ շաքար օգտագործել չի կարելի:  
Վերցրու, վերցրու, մինչև Ալբերտս Բանակից գա, խանութները լիքը կլինեն:

ՍԻՐԱՆ - Վայ, աստված բոլորիդ դարիքներին տուն հասցնի ու հետն էլ իմ Մելիքին:  
Հարկավոր չէ, տիկին Բերսաբե, մի կերպ յուր կզնանք:

ՆԱԶԻԿ - Այ մարդ, ինչի՞ պետք չի, է... Թողեք որ մարդը լավություն անի, էլի... ինչի չեք  
թողնում, որ մարդը կյանքում գոնե մի անգամ լավություն անի ուրիշներին...

ՎԱՀՐԱՄ - Նազիկ...

ՍԻՐԱՆ - Ինչո՞ւ ես չար խոսքեր ասում, Նազիկ...

ՆԱԶԻԿ - Դե դու մարդկանց օգնող չես, էլի, տիկին Բերսաբե... Քեզ համար մենակ դու, ու մի  
աշխարհ, մի Ալբերտ...

ՎԱՀՐԱՄ –Նազիկ...

ԲԵՐՍԱԲԵ - Սրանից հետո նույնը կարո՞ղ ես կրկնել...

ՆԱԶԻԿ - Ի՞նչ... չէ, չէ, սրանից հետո, չէ...

ԲԵՐՍԱԲԵ - Տեսնո՞ւմ ես, ինձ հասկանալու հերթը քեզ էլ հասավ: Այդպես է, հերթով է,  
Նազիկ...

ՆԱԶԻԿ - *(ծիծաղում է)* Աման, ես քեզ հետ գործ չունեմ... Քո խոսքերի տակից ո՞վ կարող է  
դուրս գալ... Ես քեզ նման զիմնազիա չեմ ավարտել:

ԲԵՐՍԱԲԵ - Ապրես: Սիրան, միայն թե փոքրիկ-փոքրիկ կտորներով կտաս, աստված չանի  
շաքարախտ ընկնեն, ասում են շատ անիծյալ հիվանդություն է:

*(Դռան բախոց: Ներս է մտնում պառավ մի կին)*

ՊԱՌԱՎ - Բարև ձեզ: Ներող եղեք, էդ ձեր տնից են հացի քարտերը կորցրել...

ՏԻԳՐԱՆ - Հա, մայրիկ ջան, հո չե՞ն գտել...

ՊԱՌԱՎ - Է, որդի ջան, ո՞ր գտնողը կասի... *(Միտնում է)* Քո՞ տղեն է կորցրել ...

ՍԻՐԱՆ - Հա, մայրիկ ջան, ինչի՞ց իմացար...

ՊԱՌԱՎ - Աչքերիցդ, աղջիկ ջան, դե ես վերցրու, ես գնամ՝ որբերիս մենակ եմ թողել:

ՍԻՐԱՆ - Էս ի՞նչ է, մայրիկ:

ՊԱՌԱՎ - Հաց է, բալա ջան, մի քիչ այլուր ունեի, իմ ձեռքով եմ թխել...

ՎԱՀՐԱՄ - *(Հուզմունքից խեղդվում է)* Օֆ, օֆ...

ՄԻՐԱՆ - Էս ի՞նչ ես անում, նանի ջան, եղպես ո՞նց կլինի: Ախր դու մեզ չես ճանաչում, բարեկամ չենք, հարևան չենք...

ՊԱՌԱՎ - Բարեկամ չենք, հարևան չենք... ուրեմն մարդ էլ չե՞նք... Մարդ ենք, չե՞... Համ էլ երեք փոքր տղերք ունեմ բանակում... ասում եմ՝ ով գիտե, գուցե մի մեր էլ հիմի մի-մի կտոր հաց է նրանց ձեռքը դնում...

ԲԵՐՍԱԲԵ - Խելագարվել կարելի է...

ՆԱԶԻԿ - Աստված էլ քո բալեքին հասնի, նանի...

ՊԱՌԱՎ - Դե ես գնացի, որբերիս անտեր եմ թողել:

*(Հեռանում է)*

ՆԱԶԻԿ - Թող Հիտլերի բալեքն անտեր մնան, որ սիրտս հովանա...

ԲԵՐՍԱԲԵ - Նա երեխաներ չունի, Նազիկ:

ՄԻՐԱՆ - Ճի՞շտ...

ՆԱԶԻԿ - Այսինքն՝ ինչի՞ ենք զարմանում: Բա նրա արածը ծնողի արած է:

Բա ծնողը, հերը, ձեռք կբարձրացնի՞ երեխեքի վրա, կամ ծնողը ծնողին կկտրի՞ իր զավակներից ու չուրերը կզցի՞ ... Մեր ո՞ր մեղքի համար... Մեզ համար ապրում էինք, էլի...

*(Ներս է մտնում Լիզան)*

ԼԻԶԱ - Բարև ձեզ... Միրան յա դյա դետեյ օլադի դելալա: Պուստ կուշայուս նա զորոկյե...

ՄԻՐԱՆ - Բա եղա՞վ, Լիզա ջան, էս ի՞նչ ես անում:

ԼԻԶԱ - Ինչո՞ւ չեղավ: Եղավ, եղավ:

ՆԱԶԻԿ - Այ աղջի, որ մի հատ էլ ինձ տայիր, ի՞նչ կլիներ...

ԼԻԶԱ – Տեքե նե պոլոժենո... նու յա պոշլա: Այրո վերնյոսցա իզ զավոդա, մենյա նե բուդետ, սումա սայդոտ:

*(Հեռանում է: Նրա բաց թողած դռան մեջ հայտնվում է Ցուլակը)*

ՅՈՒՆԱԿ - (Բղավում է) Մա-մա, մամա, շորերս հավաքիր, ես գնում եմ, մամա:

ՄԻՐԱՆ - Ո՞ր ես գնում, այ բալա, ես կես գիշերին...

ՎԱՀՐԱՄ - Այ տղա, էդ ո՞նց ես տուն մտնում, բարևդ ինչի՞ ես մոռացել:

ՅՈՒՆԱԿ - Ե՛ս: Ճիշտ որ: Բարև, հայրիկ ջան, բարև, մայրիկ ջան, բարև ձեզ, մեր սիրելի, մեր անմոռանալի հարևաններ: Ես գնում եմ, բարի ճանապարհի մաղթեք ինձ...

ՆԱԶԻԿ - Էդ ո՞ր ես գնում, Յուլյակ ջան...

ՅՈՒՆԱԿ - Ռազմաճակատ եմ գնում, Նազիկ մորաքույր, ռազմաճակատ...

ՎԱՀՐԱՄ - Այ տղա, դու հո հարբած չես:

ՅՈՒՆԱԿ - Ե՛ս: Ես բոլորովին էլ հարբած չեմ, հայրիկ ջան, այ այսքան էլ հարբած չեմ: Բայց էլ չեմ կարող հանգիստ նստել տանը: Բա սա կյա՞նք է, որ ես ապրում եմ: Մարդիկ արյուն են թափում այնտեղ, իսկ ես աղավիններ եմ թոցնում ու սովորում բուսաբանություն: Բու-սա-բա-նություն, կեն-դանա-բանու-թյուն, երկրա-չափու-թյուն. Ես էլ եմ ուզում կովել, էդ ֆաշիստների հերն անիծել: Երկրաչափություն... Ես ուզում եմ ոտքով չափել երկիրը... Եվ այդ երկիրն ազատել հիտլերյան հորդաններից...

ՄԻՐԱՆ - Քոռանամ ես՝ խամձ է, ինչ չէինք տեսել, էսօր տեսանք, ձեզ մատաղ:

ՅՈՒՆԱԿ - Խմած չեմ մամ... այ, էսքան եմ խմել, քո արև... Վասյան ասաց՝ դավայ, ես էլ խմեցի մի քիչ:

ՎԱՀՐԱՄ - Այ քեզ տնաքանդություն: Վասյա՞ն ով է, Յուլյակ...

ՅՈՒՆԱԿ - Մի հրաշալի տղա է, պապ, մեր տան դիմացի հոսպիտալից: Երկու ոտքերն էլ կտրած են, բայց երգում է: Կինը եկել էր Տուսպսեից, Վասյային գրկեց երեխայի նման, տարավ... Կինը լաց էր լինում, իսկ ինքը երգում էր... Վասյան ինձ ասաց, Կոլյա, դավայ, ու ես խմեցի մի քիչ...

ԲԵՐՍԱԲԵ - Դա՞ ինչ հիմարություն է... երեխային հարբեցնելը:

ՅՈՒՆԱԿ - Ինչի՞ եմ երեխա, տիկին Բերսաբե, քո Ալբերտը ինձանից ինչքա՞ն էր մեծ: Ես նրանից բոյով չեի՞ ... ինչո՞ւ նա կովի, իսկ ես քաշ գամ էստեղ որպես թիկունքի առնետ:

ՎԱՀՐԱՄ - Խելքդ բոյիդ ես տվել, բայց դու տասնյոթ տարեկան էլ չկաս, քեզ ո՞վ է բանակ տանողը:

ՅՈՒՆԱԿ - Կամավոր կգնամ... կփախչեմ կգնամ... Գնդի որդի կդառնամ... Կգնամ ... Կգնամ քո Ալբերտի մոտ, տիկին Բերսաբե, քո Անդրանիկի մոտ էլ կգնամ, Նազիկ մորքույր, իմ

եղբայր Մելիքի մոտ կգնամ, մամա... մամա... ախր ես նրանց բոլորին էլ սիրում եմ,  
ախր ես առանց նրանց ապրել չեմ կարող: Բա նրանք մեղք չե՞ն... Բա նրանք մեղք չե՞ն...

ԲԵՐՍՍԱԲԵ - Խեղճ երեխաներ, խեղճ երեխաներ...

ՅՈՒՆԱԿ - Մամա, շորերս տուր, ցավդ տանեմ... Թե չէ, այ հենց էսպես կփախչեմ, ես գնում եմ  
Ուկրաինա... Ես Ուկրաինայի հացն եմ սիրում...

ՆԱԶԻԿ - Ինչի՞ ես շտապում, Յուլակ ջան, մի տարի հետո կտանեն, էլի...

ՅՈՒՆԱԿ - Չեմ ուզում, մյուս տարի չեմ ուզում: Մյուս տարի պատերազմը կվերջանա... Բա ես  
ի՞նչ անեմ... ես էլ եմ ուզում ոչնչացնել ֆաշիստներին: Ես էլ եմ ուզում իմ Մելիք եղբոր  
նման մեղալ ստանալ՝ «Խիզախության համար»: Կտեսնեք, որ ես հերոս կդառնամ, այ  
երդվում եմ...

ՎԱՀՐԱՄ - Տեղերը բաց, թող պառկի, այ կնիկ...

ՅՈՒՆԱԿ - Ի՞նչ, հայրիկ, ցավդ տանեմ, թող քո արտադրած ականները պայթեցնեմ թշնամու  
զլխին, էլի... թող հերոս դառնամ, էլի...

ՄԻՐԱՆ - Առավոտը կդառնաս, տղա ջան, պառկիր քնիր, առավոտը շորերդ կտամ կգնաս,  
արևիդ մեռնեմ...

ՆԱԶԻԿ - Հա, հա, առավոտը լավ է, էս գիշերով ո՞ւր պիտի գնաս... Քնիր, առավոտը ես էլ քեզ  
հետ կգամ... իրար հետ կգնանք...

ՅՈՒՆԱԿ - Չէ, դու չես գա...

ՆԱԶԻԿ - Կգամ, կգամ, Յուլակ ջան, Անդրանիկին կարոտել եմ...

ՅՈՒՆԱԿ - Մամա, բայց իմացիր, առավոտ շուտ գնալու եմ... Որ ասել եմ, գնալու եմ... Ես  
Վասյային զինվորական երդում եմ տվել...

ՄԻՐԱՆ - Հա, բա ո՞նց, բա ո՞նց, տղա ջան...

*(Գրկած, համոզելով, մի կերպ մյուս սենյակն է տանում Յուլակին)*

ՎԱՀՐԱՄ - Այ քեզ կրակ...

*(Ներս է ընկնում Սաթիկը)*

ՍԱԹԻԿ - Հը, էսօր լոտո չե՞նք խաղում...

ՆԱԶԻԿ - Երանի հավեսիդ, այ աղջի:

ՍԱԹԻԿ - Տիգրա՞ն:

ՏԻԳՐԱՆ - Հը ...

ՍԱԹԻԿ - Բա ասում էիր Փոքր արջը ցույց կտամ քեզ...

ՆԱԶԻԿ - Վայ, գնա քնի, այ աղջի, ի՞նչ արջ, ինչ բան...

*(Սաթիկն ու Տիգրանը ծիծաղում են)*

ԲԵՐՍԱԲԵ - Փոքր արջը աստղերի համակարգություն է, Նազիկ, աստղեր են ...

ՆԱԶԻԿ - Է, շատ զիտեմ, տիկին Բերսաբե... Ո՞վ է աստղերին նայողը...

*(Տիգրանն ու Սաթիկը ծիծաղում են)*

ՎԱՀՐԱՄ - Այ թե ում համար պատերազմ չկա:

ԲԵՐՍԱԲԵ - Եվ լավ է, և շատ լավ է, որ այդպես է, Վահրամ...

*(Մի դռնից գլուխը օրորելով ներս է մտնում Միրանը, մյուս հիմնական դռնից Լիզան: Լիզայի դեմքը փայլում է)*

ԼԻԶԱ – Միրան, տանցույ...

ՄԻՐԱՆ - Ի՞նչ, ինչ անե՞մ...

ՆԱԶԻԿ - Ասում է՝ պար արի: Ինչ է պատահել, Լիզա:

ՄԻՐԱՆ – Վայ, վայ, Մելիքից նամակ է եկել... Ո՞ւր է, ո՞ւր է...

ԼԻԶԱ - Չե, չե, տանցույ...

ՄԻՐԱՆ - Է, շաշի մեկը, սրտովս գնա ... Ես քո քեֆը չունեմ...

ԼԻԶԱ - Չե, չե, տանցույ...

ՆԱԶԻԿ - Դե լավ, լավ, ես կպարեմ, ըհը, դե ասա, Լիզա, հոգի հանեցիր:

ԼԻԶԱ - Չե, չե, տանցույ, ի վայր...

ՄԻՐԱՆ - Է, արագ...

ՆԱԶԻԿ - Դե պարի, էլի, ինչ ես կոտրատվում: Պարի, թե չէ լոբիս հետ եմ տանում: Ըհը, էսպես, էսպես...

ՄԻՐԱՆ - Վայ, հոգի հանեցիր, էլի...

*(Ծիծաղելով սուտ-սուտ շարժում է ձեռքերը)*

Ըհը, ըհը պրծա՞նք...

ԼԻԶԱ - *(Հանդիսավոր)* Պիսմո օտ Մելիկա... *(Ուրախության ճիչեր)*

*(Վարպետ Վահրամը նայում է նրանց, հետո շրջվում է դեպի փակ պատուհանը, ծխում է ազահաբար, հուզված):*

ՎԱՀՐԱՄ – Ըհը, էստեղ են ասել՝ մի աչքին լաց, մի աչքին ծիծաղ: Էս ի՞նչ զարմանալի բան է մարդ արարածը, տեր աստված:

ՄԻՐԱՆ - Բա ի՞նչ է գրում բալետ, ի՞նչ է ասում, ո՞վ կկարդա, Սաթիկ ջան կարդա, ցավդ տանեմ:

ՍԱԹԻԿ- Մեծ ուրախությամբ: *(Կարդում է նամակը)*

Նամակս դեպի իմ չքնաղ հայրենիք, իմ կարոտած Երևան, իմ թանկագին ծնողներին:

Միրելի հայրիկ և մայրիկ, նախ և առաջ ընդունեք ձեր որդու սրտից բխած քաղցր և կարոտալի բարևները: Եվ երկրորդը, եթե հարցնեք ինձանից ես ողջ եմ, առողջ եմ միայն ձեր կարոտն եմ քաշում:

ՄԻՐԱՆ - Մեռնեմ քեզ:

ՍԱԹԻԿ - Ախ, եթե իմանաք ոնց եմ կարոտել ձեզ, մեր տանը, քեզ հայրիկ ջան ու քո թուրունի հոտին, քեզ մայրիկ ջան ու քո կամթոցներին, իմ փոքրիկ, իմ լավ եղբայրներին: Ձեզ լսում են, թե գամ դրանց ականջները պոկեմ: Կատակ: Այդ ինչ երջանկություն էր, որ միասին էինք իրար հետ: Չարմանալի է, չէ՞, երջանիկ ենք եղել ու չենք իմացել այդ մասին: Փնթփնթացել ենք ամեն մի դատարկ բանի համար, նեղացել ենք իրարից: Չէ, որ գամ, արդեն գիտեմ ոնց ենք ապրելու: Գիտեմ: Միայն թե գամ: Միայն թե ոչնչացնենք, իր բնում խեղդենք Հիտլերյան ֆաշիզմը ու վերադառնանք հաղթանակով: Երեք օր առաջ մի գերմանական ինքնաթիռ ցած գցեցինք: Մինչև ընկնելը, ես օդաչուին տեսա, ջահել, կապուտաչ տղա էր: Բայց մենք ի՞նչ մեղավոր ենք: Մե՞նք ենք հարձակվել նրանց վրա: Մե՞նք ենք նրանց քաղաքներն ավերել: Ու ոնց որ դրա ճիշտ պատասխանը, մի հայկական ճակատային թերթում կարդացի Ավետիք Բսահակյանի բանաստեղծությունը: Էդ ոնց է գրել, մամ...

*Մենք խաղաղ էինք մեր լեռների պես, դուք հողմերի պես խուժեցիք վայրագ  
Մենք ձեր դեմ ելանք մեր լեռների պես, դուք հողմերի պես ոռնացիք վայրագ:  
Բայց մենք կանգուն ենք մեր լեռների պես, դուք հողմերի պես կկորչեք վայրագ:*



Այդպես է, այդպես պետք է լինի: Շատ եմ կարոտել Ձեզ բոլորիդ, բոլորիդ... Մարոն գալի՞ս է մեր տուն:

ՄԻՐԱՆ - Ոհր, էլի Մարոն...

ՍԱԹԻԿ - Ցոլակ ջան մեկ-մեկ գնա տեխնիկումից տուն բեր, ախպեր ջան: Հանկարծ մեկնումեկը չնեղացնի: Նրա համար շատ դժվար է: Ես չեմ էլ պատկերացնում, թե ոնց է ապրում առանց... մենակ: Լավ աղջիկ է, տերություն արեք, մամ ջան, պապա ջան, կներեք, որ այդպիսի բաներ եմ գրում, տեսնում եք ինչքան բան է փոխվել մեր կյանքում, ինչքան եմ մեծացել ես... Իսկի մտքովս կանցնե՞ր, որ կհամարձակվեմ խոսել ձեզ հետ Մարոյի մասին: Ամոթից գետինը կմտնեի:

Շատ բարևներ մեր բոլոր բարի կամեցողներին, մեր սիրելի հարևաններ Նազիկին, Սաթիկին, Վալոդին, տիկին Բերսաբեին, և հատկապես ընկեր Վարդանյանին: Եվ առանձնապես Մարոյին: Մարոյին թևիդ տակ առ, մամ, բաց չթողնես մինչև որ ես գամ:

ՄԻՐԱՆ –Ախ, մենակ թե դու արի, դու արի, բալա ջան...

ՍԱԹԻԿ - Ձեր Մեղիք: Դաշտային փոստարկդ 641878:

## ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

*(Շենքի տանիքը: Տիգրանը գրկել է Սաթիկի ուսը, երկնքին են նայում):*

ՍԱԹԻԿ - Չեմ մըսում:

ՏԻԳՐԱՆ – Հա՞ ... *(հեռացնում է ձեռքը)*

ՍԱԹԻԿ - Տիգրան, ճի՞ շտ է, որ ամեն մարդ երկնքում իր աստղն ունի:

ՏԻԳՐԱՆ - Ի՞նչ իմանամ...

ՍԱԹԻԿ- Իսկ քո կարծիքով իմ աստղը ո՞րը կլինի...

ՏԻԳՐԱՆ - Ամենապայծառը...

ՍԱԹԻԿ - Հաճելի պատասխանի համար դուք պարզատրվում եք հինգ հատ փշատով

ՏԻԳՐԱՆ -Փշա՞տ, ո՞ր տեղից, Սաթ: Ո՞վ է տվել:

ՍԱԹԻԿ - Կեր, հետո կասեմ:

ՏԻԳՐԱՆ - *(Մի հաստը բերանն է տանում)* Ո՞վ...

ՍԱԹԻԿ - Թելմանը:

ՏԻԳՐԱՆ - Ո՞վ... *(ձեռքի փշատներն ուզում է շարտել)*

ՍԱԹԻԿ - Սուտ եմ ասում, սուտ եմ ասում, մամայի արև... նա էլ մարդու բա՞ն կտա...

ՏԻԳՐԱՆ - Քեզ կտա: Որ նայում է քեզ, ուզում եմ քարն առնեմ ու տամ գլխին:

ՍԱԹԻԿ - Ես մեղավոր եմ, որ գեղեցիկ եմ:

ՏԻԳՐԱՆ - Դու գեղեցիկ չես, թիթիզ ես:

ՍԱԹԻԿ - Թելմանն այդ կարծիքին չէ...

ՏԻԳՐԱՆ - Ի՞նչ, նա քեզ բա՞ն է ասել...

ՍԱԹԻԿ - Մրսում եմ, Տիգրան...

ՏԻԳՐԱՆ - Նա քեզ ի՞նչ է ասել...

ՍԱԹԻԿ - Ասողին լսող է պետք, երիտասարդ... Ես երբ չեմ ուզում, չեմ լսում... Հավանաբար քեզ եմ քաշել...

ՏԻԳՐԱՆ - Էդ ի՞նչն է, որ չեմ լսել...

ՍԱԹԻԿ - Ոչ թե ինչը, այլ ում՝ ընկեր Արաքսային: Մրսում եմ Տիգրան...

ՏԻԳՐԱՆ - *(Գրկում է ուսը)* Ընկեր Արաքսայի՞ն: Ե՞րբ չեմ լսել:

ՍԱԹԻԿ - Բա ինչո՞ւ թելադրությունից «լավ» ստացար:

ՏԻԳՐԱՆ - Հա... թեկուզ «վատ» էլ դներ, ես Հիտլերի անունը մեծատառով չէի գրի: Որ սպանեն էլ՝ չեմ գրի: Իրեն էլ ասացի, գոնե դուք, ընկեր Արաքսայ, չպետք է ստիպեք: Ես ինչպե՞ս մեծատառով գրեմ մի գազանի անուն, որը սպանել է ձեր որդուն: Մենք հո գիտենք ամեն ինչ:

ՍԱԹԻԿ - Խեղճ ընկեր Արաքսայ...

ՏԻԳՐԱՆ - Հա, Սաթ ջան, հանկարծ բռնեց կոկորդը, փակեց աչքերն ու հեծկլտալով դուրս եկավ դասարանից...

ՍԱԹԻԿ - Հիմար... Չեմ մրսում...

ՏԻԳՐԱՆ - Ի՞նչ եղավ քեզ:

ՍԱԹԻԿ - Չեմ մըսում: *(Ազատում է ուսը)* Ուրեմն ճիշտ են ասում, որ տղաները ավելի ուշ են զարգանում, քան աղջիկները: Լեզու կա, հատուկ անունների օրենք կա...

ՏԻԳՐԱՆ - Հազար օրենք էլ լինի, ես Հիտլերի անունը մեծատառով չեմ գրի:

ՍԱԹԻԿ - Վայ, տես, տես, այն աստղն ընկավ... Տեսա՞ր... ինչքան գեղեցիկ էր...

ՏԻԳՐԱՆ - Դրա համար էլ չեմ ուզում գտնել իմ աստղը, Սաթ, վախենում եմ հանկարծ ընկնի...  
Եվ Մելիքի աստղն էլ... Չեմ փնտրում...

ՍԱԹԻԿ - Մելիքի Մարոն շատ սիրուն է, չէ՞, Տիգրան:

ՏԻԳՐԱՆ - Շատ... Ես նրանից գեղեցիկ աղջիկ աշխարհում չեմ տեսել... Քեզանից բացի, Սաթ...

ՍԱԹԻԿ - Էս ինչո՞ւ հանկարծ մըսեցի...

ՏԻԳՐԱՆ - *(Գրկում է ուսը)* Ախր մեզանից ոչ մեկը Մարոյին չէր տեսել... Ու երբ կայարանում բանակ էինք ճանապարհում Մելիքին... Ու երբ որ գնացքը շարժվեց, Մելիքը հանկարծ ցած կախվեց պատուհանից ու պատի տակ կանգնած մի աղջկա ցույց տալով, մամային ասաց. «Մամ, էն աղջկան պահեք ինձ համար, մամա»: Ձայնը մինչև հիմա էլ ականջներիս մեջ է... «Մամա»...

ՍԱԹԻԿ - Լավ տղա է Մելիքը... Ես նրան շատ եմ սիրում, Տիգրան...

ՏԻԳՐԱՆ - Ու հենց որ գնացքը հեռացավ, մաման, հայրիկը, Յուլակը շրջապատեցին Մարոյին: Մաման գրկեց, համբուրեց ու ասաց. այսուհետև դու իմ աղջիկն ես, Մարո ջան, ես իմ Մելիքի կարոտը քեզնից եմ առնելու:

Ու հենց կայարանից տուն բերեցինք, մաման մի սիրուն չիթ նվիրեց Մարոյին, հայրիկը մի տոպրակ չամիչ ու նուշ, Յուլակը մի շար ուլունք, որ ինքն էր սարքել դեղձի կորիզները տաշելով, ես էլ...

ՍԱԹԻԿ - Դու էլ քո ձեռքի էլեկտրական լապտերը նվիրեցիր...

ՏԻԳՐԱՆ - Հա, ու ասացի, վերցրու, որ ուշ լինի՝ մեր տուն գաս, չվախենաս մութից... Ու հիմի էլ գիտես, իրիկունները որ գալիս է իմ լապտերով է գալիս...

ՍԱԹԻԿ - Մելիքն ու Մարոն իրար շատ են սիրում, չէ՞, Տիգ...

ՏԻԳՐԱՆ - Շատ... Մելիքը մի նամակի մեջ Մարոյին գրել էր, թե... Մարոն ցույց տվեց ինձ... Գրել էր թե՛ ինձ ոչինչ էլ չի պատահի, Մարո ջան, ինձ ոչ մի գնդակ էլ չի կպչի, քանի դու դեռ սպասում ես ինձ: Ու գրել էր, թե... Շուտ-շուտ նամակ գրի, որովհետև ես քո

նամակներով եմ ապրում: Քո նամակներն են բարձր պահում ինձ, ազատում թշնամու գնդակից, երբ մարտի եմ տանում իմ կործանիչը:

ՍԱԹԻԿ - Տիգ... Իսկ որ դու լինեիր բանակում, առաջինն ո՞ւմ նամակ կգրեիր...

ՏԻԳՐԱՆ - Մամայիս, ո՞ւմ...

ՍԱԹԻԿ - Չեմ մրսում...

ՏԻԳՐԱՆ - Իսկ երկրորդը՝ քեզ:

ՍԱԹԻԿ - Ասացի՝ չեմ մրսում:

ՏԻԳՐԱՆ - (*Հենացնելով ձեռքը*) Դե, գիտես ինչ, ուզում ես մրսի, ուզում ես ցրտահարվի, ուզում ես խեղդվի շոգից, առաջինը մայրիկիս եմ նամակ գրելու...

ՍԱԹԻԿ - Վայրենի...

ՏԻԳՐԱՆ - Առանց այդ էլ, ամեն անգամ, երբ Մարոն Մելիքից նամակ է ստանում ու բերում է մեր տուն, մաման սկզբում շատ ուրախանում է, իսկ Մարոյի գնալուց հետո լաց է լինում միշտ:

ՍԱԹԻԿ - Ինչո՞ւ...

ՏԻԳՐԱՆ - Ասում է՝ որ նրան նամակ է գրում, թող մեզ էլ գրի, էլի... Բա ես հազար Մարո կփոխեմ մամայիս մի կաթիլ արցունքի հետ...

ՍԱԹԻԿ - Է, Տիգ, մի նեղանա, ուզո՞ւմ ես ասեմ՝ մրսում եմ, բայց դու դեռ չգիտես, թե ինչ բան է իսկական սերը...

ՏԻԳՐԱՆ - Պահ, հենց դու գիտես, էլի...

ՊԱՏԿԵՐ ՉՈՐՐՈՐԴ

(*Վարպետ Վահրամի տունը: Առավոտ է: Միրան մայրիկը կար է անում մեքենայով՝ հետն էլ մեղմիկ երգելով «Որսկան ախպերը»: Վարպետ Վահրամը ինչ-որ բան է խաբրտում պատուհանի զոզին ամրացված փոքրիկ մամլիչի վրա: Դուռը բախում են: Ներս է մտնում Մարոն*)

ՄԱՐՈ - Բարի լույս ձեզ, եկել եմ ուրախացնելու...

(*Վահրամն ու Միրանը վեր են թռչում*)

ՎԱՀՐԱՄ - Նամա՞կ է, բալա ջան...

ՄԱՐՈՆ - Նամակ: Ավելի ճիշտ՝ նամակներ, միանգամից երկուսը:

ՄԻՐԱՆ - *(Մոտենում է՝ ձեռքերը պարզած)* Լավ է, որ Լիզան էստեղ չի, թե չէ պարեցնելու էր նորից: Վայ, ուրախ անցնի կյանքդ իմ Մելիքի հետ, Մարո ջան, բախտավոր լինես, աղջիկ ջան, բարով-խերով իմ ձեռքով ձեր կանաչ-կարմիր կապեմ, հարս ջան: Ո՞րտեղ են նամակները, ի՞նչ է գրում, ո՞նց է, ցավդ տանեմ, հո չի՞ վիրավորվել, բա ո՞նց էր, որ էսքան ժամանակ նամակ չէր գրում: Թե՛ մրսել, հիվանդացել է... Էն վերջին նկարի մեջ երեսին գույն չկար...

ՎԱՀՐԱՄ - *(Երջանիկ ծիծաղելով)* Սպասիր, այ կնիկ, թող շունչ քաշի երեխեն, միանգամից վրա ես տալիս ավտոմատի նման:

ՄԱՐՈՆ - Ոչինչ, ոչինչ, հիմա կպատասխանեմ հերթով: Մելիքը ողջ և առողջ է: Մոսկվայի մոտ մի փոքրիկ քաղաք կա՝ Մոնինո, այդ քաղաքի մոտ է նրանց ավիացիոն ջոկատը: Սկզբում ուրիշ տեղ են եղել, չի կարողացել գրել: Հետո կարծես թե մրսեցրել է ձեռքերը, մի քանի օր պառկել է հոսպիտալում...

ՄԻՐԱՆ - Վայ, քոռանամ ես, ախր ասում էի, չե՞, սիրոս տպում էր, չէ, տեսա՞ր որ երազս ճիշտ դուրս եկավ, Վահրամ: Ախր տեսա երեխիս ձիու վրա նստած, բայց ձեռքին սանձ չկա: Ծիծաղելով ասում է, մամ ջան, ձին տվել են ու սանձը չեն տվել, ո՞նց քշեմ: Հենց որ վեր կացա, ասացի քոռանամ ես, երեխուս մի բան է պատահել: Ասացի՞, թե չէ, Վահրամ...

ՎԱՀՐԱՄ - Ասեցիր, ասեցիր, հիմա ի՞նչ ես ուշացած լաց լինում: Ամեն ինչ անցել է, չե՞...

ՄԻՐԱՆ - Ախր նրա ձեռքերը ինչո՞ւ պիտի մրսեին, բա դու մարդուն երկինք ես ուղարկում ու թաթման չես տալի՞ս: Բա ես ու մամս եմ գիշեր-ցերեկ աչքերս քոռացնելով էս ձեռնոցները կարում, որ իմ երեխուն մի հաստ ձեռնոց չի հասնելու: Հասցեն կա, չե՞, Մարո ջան, հասցեն տուր մի քանի հաստ պասիլկա անեմ ուղարկեմ...

ՎԱՀՐԱՄ - Էս ամառվա շոգին, ի՞նչ ձեռնոց, Միրան...

ՄԻՐԱՆ - Վայ, երկնքում էլ է շո՞գ, հրես Մասիս սարը մեր կողքին, վրան ձյուն է դրած:

ՎԱՀՐԱՄ - *(ծիծաղելով)* Ես մեղա, ես մեղա, Միրան աղջիկ, մոռացել էի որ տղադ օդաչու է: Ներողություն:

ՄԻՐԱՆ - Այ եղպեա: Մարո ջան, աղջիկ ջան, բա ի՞նչ է գրում, նամակները կարդա, տեսնենք, էլի...

ՄԱՐՈՆ - Ըըմ, Միրան մորաքույր...

ՄԻՐԱՆ - Յանի որ մամա ասես, ի՞նչ կլինի ... Մելիքը քեզ ասել էր, որ ինձ մամա ասես, չե՞...

ՄԱՐՈՆ - Այո, այո, դեռ կվարժվեմ, Միրան մո... մայրիկ: *(Բացում է նամակները)* Ուրեմն նախ և առաջ իմ ամենաքաղցրիկ... չէ, էս մասը չէ: Ըհը, չէ, սա էլ չի... Ահա, Մարո ջան շուտ-

շուտ գնա մեր տուն, տես ոնց են իմ մայրիկն ու հայրիկը, շատ-շատ բարևներ հաղորդիր նրանց և նմանապես Ցոլակին ու Տիգրանին: Եվ իմացիր, որ ես քեզ... Չէ, սա ուրիշ է...

ՄԻՐԱՆ - Բա էն մյո՞ւսը:

ՄԱՐՈ - Այստե՞ղ... Այստեղ էլ համարյա նույնն է Սիրան... մայրիկ: Ահա, ահա, Մարո ջան, իմ ինքնաթիռով խուզարկող թռիչքով ցած էի իջնում, անցնում էի գրեթե ծառերին դիպչելով և հանկարծ հիշեցի այն ծառը, մեր ծառը, որի տակ... Էհ, չէ, չէ, սա էլ չէր... ահա, ահա, չէ, ահա, ջերմ-ջերմ բարևներ է ուղարկում...

ՄԻՐԱՆ - Բա մնացած տեղերում էդքան ի՞նչ է գրել, այ ցավդ տանեմ...

ՎԱՀՐԱՄ - Քեզ ինչ, այ կնիկ, կարևորն այն է, որ ողջ առողջ է մեր տղեն: Էլ ի՞նչ ես ուզում:

ՄԻՐԱՆ - Բան չեմ ասում...

*(Ննջարանից դուրս է գալիս Ցոլակը՝ հորանջելով ու գլուխը բռնած)*

ՑՈԼԱԿ - Վայ, գլուխս... Մարո՞, Մարո ջան, նամակ կա՞ Մելիքից:

ՄԱՐՈ - Նամակներ, Ցոլակ ջան, և շատ-շատ բարևներ...

ՑՈԼԱԿ - Իսկ դու ոնց ես, քույրիկ ջան, երեկ ձեր տուն եկա, տանը չէիր...

ՄԱՐՈ - Իմացա, Ցոլակ ջան, պրակտիկայի մեջ ենք, գյուղում, և շատ շնորհակալություն լիմոնադի համար: Վաղուց չէի խմել...

ՑՈԼԱԿ - Հա՞... Քանի՞ շիշ էի թողել... Բան չեմ հիշում, գիտե՞ս... Էս մեր հոսպիտալի վիրավոր տղերքի հետ մի քիչ...

ՎԱՀՐԱՄ - Այսինքն ո՞նց չես հիշում, այ տղա, մերդ արդեն հավաքել է շորերդ, չամադանդ պատրաստ է:

ՑՈԼԱԿ - Ինչո՞ւ, էդ ո՞ւր եք ուղարկում:

ՎԱՀՐԱՄ - Մենք ե՞նք ուղարկում: Կես գիշերին կպել էիր, թե շորերս սվեք բանակ եմ գնում, զավթիչների դեմ կռվելու... որովհետև ես Ուկրաինայի հացն եմ սիրում...

ՑՈԼԱԿ - Հա, հա, լավ էլի, հայրիկ...

ՎԱՀՐԱՄ - Շան լակոտ, որ խմել չես կարողանում, ինչի՞ ես խմում: Կամ քո ի՞նչ խմելու ժամանակն է...

ՄԻՐԱՆ - Վահրամ... երեխուն մի... Մարոյի մոտ...

ՎԱՀՐԱՄ - Լավ երեխա է... բա ես էլ կարծում էի գերմանացիների կեսին ջնջած կլինես, այ տղա...

ՅՈՒԼԱԿ - *(Սմայլելով)* Մամ, շատ եմ հիմար- հիմար բաներ խոսացե՞լ...

ՄԻՐԱՆ - Հիմար չէին, բալիկ ջան, ուղղակի տխուր բաներ էին, մի քիչ լավ չէր, էլի, հարևանների մոտ...

ՅՈՒԼԱԿ - Պահո, ոչինչ չեմ հիշում, գիտես, Մարո... Այսինքն՝ մինչև ձեր տունը հիշում եմ, իսկ ձեր տնից հետո... ոչ մի բան: Էդ ի՞նչ հիմար բան է եղել խմիչքը:

ՎԱՀՐԱՄ - Լավ է, որ եղբանը հասկացել ես: Ուրեմն գուր չի անցել խմածը:

ՅՈՒԼԱԿ - Հա, հայրիկ ջան, թե մեկ էլ ես... ըհը...

ՄԱՐՈ - Դե ես գնացի... Հա, Սիրան մո... մայրիկ, գյուղից մաման մի քիչ պանիր էր ուղարկել ու մի կտորի վրա էլ հատուկ գրել ձեր անունը:

ՄԻՐԱՆ - Ապրի քո մայրիկը... որ տեսնես, ասա, որ էս տարի տոմատ եմ եփելու իրա համար...

ՎԱՀՐԱՄ - Սիրան... *(Ինչ-որ բան է հասկացնում)*

ՄԱՐՈ - Չէ, չէ, ես ուշանում եմ, նամակների համար եկա, էլի պրակտիկայի եմ գնալու:

ՅՈՒԼԱԿ - Սպասիր, սպասիր, ես քեզ բան ունեմ ասելու, Մարո ջան... Ես քեզ ճանապարհ կգցեմ:

ՄԱՐՈ - Գնանք, ախպեր ջան... ես էլ քեզ ասելիք ունեմ... Յտեսությունն ձեզ...

*(Հեռանում են)*

ՎԱՀՐԱՄ - Ոսկի աղջիկ է, ոսկի: Տեսնո՞ւմ ես ինչ ճաշակ ունի մեր տղեն:

*(Սիրանը լաց է լինում)*

Այ աղջի, էլի՞ ինչի ես լաց լինում, Մելիքից նամակ ստացար...

ՄԻՐԱՆ - Ախր ինչի՞ է եղպես անխղճություն անում, որ իրեն գրում է, թող մեզ էլ գրի, էլի, ի՞նչ կլինի...

ՎԱՀՐԱՄ - Էհ... Սիրան:

ՄԻՐԱՆ - Ասա...

ՎԱՀՐԱՄ - Ասում եմ՝ իմ էն սև պիջակն ի՞նչ օրի է...

ՄԻՐԱՆ - Ի՞նչ օրի պետք է լինի, նոր պիջակ է, մաքրել, կախել եմ... Քանի անգամ ես հագել...  
 ՎԱՀՐԱՄ - Հագնեմ ո՞ւր գնամ, այ կնիկ: Օպերա՞ :

ՄԻՐԱՆ - Բա ինչի՞ ես հարցնում:

ՎԱՀՐԱՄ - Ասում եմ... Մեր Պատոյին գիտես, չէ՞:

ՄԻՐԱՆ - Քո աշակերտի՞ն:

ՎԱՀՐԱՄ - Հա: Շատ լավ տղա է: Էնքան է աշխատում, որ ասում ես, էլ չի դիմանա...

ՄԻՐԱՆ - Ես գիտեմ, թե դու քո աշակերտին ինչ օրը կզգես...

ՎԱՀՐԱՄ - Ես էլ հետը չե՞մ, Սիրան, չաքուչը ես չեմ խփո՞ւմ... Հա, ինչ էի ասում, էդքան աշխատում է, չէ՞: Հետո էլ վեր է կենում, հոսպիտալներն է գնում, համերգներ է տալիս վիրավորների համար: Գիտես ինչ դուդուկ է նվագում, որ լսես լացդ կզա:

ՄԻՐԱՆ - Հա, դրա պակասը շատ եմ զգում... ինչ անում եմ, լացս չի գալիս:

ՎԱՀՐԱՄ - Խոսքի համար եմ ասում, այ կնիկ... Շատ ջիգյարով է նվագում, ոնց որ, ոնց որ երգում է դուդուկը:

ՄԻՐԱՆ - Չհասկացա: Հիմա էդ երգող դուդուկն ի՞նչ կապ ունի քո պիջակի հետ...

ՎԱՀՐԱՄ - Որ ուզես, կհասկանաս, Սիրան ջան: Ամեն օր համերգների է գնում ադեն ու հագին մի կարգին բան չկա:

ՄԻՐԱՆ - Ուրեմն դու քո էդ նոր պիջակը ուզում ես Պատոյի՞ն տալ:

ՎԱՀՐԱՄ - Հա:

ՄԻՐԱՆ - Այ տղա... Վահրամ ջան, ցավդ տանեմ, էդ ի՞նչ տեսակ մարդ ես դու: Չես ուզում, տուր փոքրացնեմ Տիգրանի վրա սարքեմ, չես ուզում՝ ասա, Ցոլակին տամ... Կարծես թե քո տղերքը կովերկոտ են հագնում: Ամոթից գետինն եմ մտնում, ման են գալիս սկլոր, կարկատած շորերով, իսկ դու...

ՎԱՀՐԱՄ - Ախր Պատոն վիրավորների համար է նվագում...

ՄԻՐԱՆ - Հոգուդ մեռնեմ, չես ուզում, ծախեմ, մի քանի կիլո հաց առնեմ, կամ փոխեմ պանրի հետ, թեկուզ պոպոքի հետ: Մենք ինչի՞ տեր ենք, որ...

ՎԱՀՐԱՄ - Ես արդեն ասել եմ Պատոյին, Սիրան... Գուցե փաթաթես պիջակը:

ՄԻՐԱՆ - Ի՞նչ... բա... բա... Բա ինձ ինչի ես խոսացնում, այ մարդ...



ՎԱՀՐԱՄ - Ուզում եմ, որ քո համաձայնությամբ լինի...

ՍԻՐԱՆ - Ի՞նչ, փաթաթելը ... ես լրիվ համաձայն եմ, Վահրամ ջան, լրիվ, լրիվ համաձայն եմ, շնորհակալ եմ, որ իմ կարծիքը հարցնում ես, հիմա կփաթաթեմ...

ՎԱՀՐԱՄ - Ապրես...

*(դռան թակոց: Ներս է մտնում Ավետիք Վարդանյանը)*

ՎԱՐԴԱՆՅԱՆ – Բարև ձեզ:

ՎԱՀՐԱՄ - Վայ, բարև, հազար բարին, Ավետիք Իսայիչ: Համեցեք, նստեք:

ՎԱՐԴԱՆՅԱՆ – Բարև ձեզ, տիկին Սիրան: Բարին բարի կլինի, եթե տեր կանգնենք, ուստա Վահրամ:

ՎԱՀՐԱՄ - Ինչի՞, ի՞նչ է պատահել, ընկեր Վարդանյան:

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Գործարանում մտա քո ցեխը, չկայիր...

ՎԱՀՐԱՄ - Ես երկրորդ հերթ եմ:

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Իմացա, ուստա Վահրամ, դրա համար էլ ուղիղ այստեղ եկա:

ՎԱՀՐԱՄ - Ու ի՞նչ...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Ցուլակը տա՞նն է:

ՎԱՀՐԱՄ - Ցուլա՞կը... Չէ, մի քիչ առաջ դուրս եկավ... Ցուլակը ձեզ պե՞տք էր:

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Չէ, ուստա Վահրամ, եթե ճիշտն ասենք՝ հիմա մենք ենք նրան պետք:

ՎԱՀՐԱՄ - Ախր ի՞նչ է պատահել, ընկեր Վարդանյան: Սիրան...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Ոչ, ոչ, ոչինչ պետք չէ: Ըստ որում՝ ես շատ քիչ ժամանակ ունեմ...

ՎԱՀՐԱՄ – Ասացի՛ գուցե մի բաժակ...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Հոնի՞ է, պատկերացրեք այնպիսի տրամադրության մեջ եմ, որ չէի հրաժարվի...

*(Սիրանը արագորեն սեղանին է դնում օղու լիտրանոց շիշն ու բաժակները: Եվ մի ակնթիվ թթու):*

ՍԻՐԱՆ - Կներեք: Ուրիշ...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Ոչինչ պետք չէ, ոչինչ, տիկին Սիրան...

*(Վահրամը լցնում է բաժակները)*

Օ, ինչ շղթա կազմեց... Նո՞ր են ուղարկել, ուստա Վահրամ:

ՎԱՀՐԱՄ - Նորը որտեղից ուղարկեն, Ավետիք Իսայիչ: Անցյալ տարվանից է: Դե խոսիր, մարդ աստծո:

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Կարծում եք հե՞ջտ է խոսելը: Մի խոսքով՝ երեկ ամբողջ երեկո ես կապիտան Սեդրակյանի հետ եմ եղել:

ՎԱՀՐԱՄ - Մեր թաղայինի՞:

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Այո: Ձեր Ցոլակն, ուստա Վահրամ, մի շատ հիմար պատմության մեջ է ընկել:  
ՄԻՐԱՆ - Ցոլա՞կը:

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Ցոլակը, տիկին Սիրան: Ներեցեք, որ վշտացնում եմ ձեզ, բայց մտածեցի, որ ավելի լավ է դառն իրողությունը բարեկամից լսեք, քան ի վերջո՝ օտար մարդուց:

ՄԻՐԱՆ - Ցոլակն ի՞նչ է արել:

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Գողություն, տիկին Սիրան:

ՄԻՐԱՆ - Գողություն՞ն : Ցոլա՞կը: Անհնար է, որ իմ տղան գողություն անի, ընկեր Վարդանյան: Աչքովս էլ տեսնեմ չեմ հավատա:

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Ինչ ասեմ...

ՎԱՀՐԱՄ - *(Կնոջը)* Մուս մնա, էլի... Գուցե թե քո տղին խմած էլ չես տեսել:

ՄԻՐԱՆ - Հա, բայց մի անգամ...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Ամեն ինչն էլ մի անգամից է սկսվում, տիկին Սիրան: Ուրեմն ես կապիտան Սեդրակյանին հանդիպեցի հենց այն պահին, երբ կալանքի օրդերը ձեռքին ձեր տուն էր գալիս:

ՄԻՐԱՆ - Վայ, քոռանամ ես...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Ուրեմն ինչ է պարզվում: Հոսպիտալի վիրավորները Ցոլակից ծխախոտ են խնդրում...

ՄԻՐԱՆ - Իմ տղեն չի ծխում, ընկեր Վարդանյան...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Ոչինչ չունեմ ասելու: Ցուլակն էլ գնում է թռչում է պոլիսեցի Արշակ աղբարի ցանկապատից, բարձրանում է պատշգամբ, երբ տանտերերը հանգիստ քնած են լինում տանը, թախտի վրայից վերցնում է հենց նոր կտրտած ու չորացնելու նպատակով փռած ծխախոտը, մոտ կես կիլոգրամ, փաթաթում հենց այն շորի մեջ, որի վրա փոված է լինում ծխախոտը և տանում, բաժանում վիրավորներին:

ՎԱՀՐԱՄ - Տունս քանդվեց:

ՄԻՐԱՆ - Բայց Ցուլակն ի՞նչ գիտեր, որ նրանց թախտի վրա ծխախոտ կար...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Արշակ աղբարի տունը հիանալի երևում է ձեր պատշգամբից, տիկին Սիրան:

ՎԱՀՐԱՄ - Բա հետո՞, ցավդ տանեմ, բա հետո՞...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Դե հետո ի՞նչ, դեպքը կատարվում է օրը ցերեկով, տեսնողներ են լինում, հայտնում են Արշակ աղբարին ու վկայություն տալիս: Կապիտան Սեդրակյանն էլ իսկույն քրեական գործ է հարուցում և զեկուցում վերադասին: Եվ ահա դատախազն էլ անխիղճ, անհոգի մի մարդ, իսկույն օրդեր է տալիս, որպեսզի կալանավորեն Ցուլակին:

ՄԻՐԱՆ - Մի բուռ թութունի համա՞ր:

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Մոտ կես կիլոգրամ, տիկին Սիրան, իսկ գիտե՞ք, թե հիմա ինչ արժե ծխախոտը: Ոսկու գին է:

ՄԻՐԱՆ - Խմած է եղել, ընկեր Վարդանյան, արևիդ մեռնեմ, կյանքում առաջին անգամ խմած է եղել իմ տղեն...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Դա նրա մեղքը չի թեթևացնում, տիկին Սիրան, ինչ ասեմ:

ՄԻՐԱՆ - Բայց հո իր համար չի վերցրել, պատերազմում տանջված, վիրավոր մարդկանց է բաժանել...

ՎԱՀՐԱՄ - Էհ, Սիրան, ի՞նչ ես խոսում, ի՞նչ, գողությունը մնում է գողություն:

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Դա է ճշմարտությունը:

ՎԱՀՐԱՄ - Արևիդ մատաղ, ընկեր Վարդանյան, բա որ թաղայինի հետ խոսեցիր, ի՞նչ ասաց:

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Չեմ չափազանցնի, շատ համոզեցի: Հրավիրեցի տուն, երկար-բարակ զրուցեցինք: Շենք է կառուցում, խոստացա ցեմենտ ու արմատուրա տալ: Եվ ի վերջո համոզեցի վերադասին զեկուցել, թե Ցուլակին չեն գտնում և սպասել երկու օր, մինչև տեսնենք ինչ ենք անում:

ՄԻՐԱՆ - Մեղա, մեղա, ես քո ոտի հողն եմ, ընկեր Վարդանյան:

ՎԱՀՐԱՄ - Ավետիք Իսայիչ... ինձ գիտես, բանվոր մարդ եմ, էլի... ոչինչ չունեմ... բայց այ էս իմ ձեռքերն ու կյանքը կտամ քեզ համար...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Բարեկամս, դու գիտես, թե ես ինչպես եմ հարգում քեզ և քո ընտանիքը:

ՍԻՐԱՆ - Փրկիր մեր տղային, ընկեր Վարդանյան, վերևն աստված կա, նա էլ քեզ ու քո զավակներին կհասնի...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Բայց ես չգիտեմ ինչ անել: Ի՞նչ կարող ենք անել: Երեկվանից ամբողջ գիշեր չեմ քնել, մտածել եմ:

ՎԱՀՐԱՄ - Ընկեր Վարդանյան, մարդ ենք, էլի, էլ ուրիշ բան չեմ ասում...

ՍԻՐԱՆ - Խմիր, ցավդ տանեմ, մի բաժակ էլ խմի...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Այսինքն, թերևս միայն մի էլք կա:

ՎԱՀՐԱՄ - Կա՞...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Միայն և միայն մի էլք: Բայց ճիշտն ասած՝ սրտովս չէ: Չգիտեմ նույնիսկ, թե ինչպես ասեմ: Եվ չգիտեմ, կստացվի՞ արդյոք: Շատ բարդ խնդիր է:

ՎԱՀՐԱՄ - Հը, ընկեր Վարդանյան...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Գուցե թե շտապ, հենց վաղը բանակ ուղարկենք Ցոլակին:

ՍԻՐԱՆ - Բանա՞կ, էլի բանակ ... բա ես մեղք չե՞մ...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Ես այլ էլք չեմ տեսնում: Պետք է որոշել՝ կամ բանտ, կամ բանակ:

ՎԱՀՐԱՄ - Բայց Ցոլակի տասնյոթը նոր է լրանում, նրան ո՞վ կտանի բանակ:

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Բարդությունը հենց դրանում է կայանում, ուստա Վահրամ: Թեև ճիշտն ասած՝ ես մի քանի մոտ մարդիկ ունեմ, որոնք թերևս կարողանան լուծել այդ հարցը: Եթե հիմնավոր խնդրեմ... Ես նրանց մինչև հիմա ոչինչ չեմ խնդրել: Այսպես ասած պահում էի նեղ օրվա համար:

ՎԱՀՐԱՄ - Բա սրանից էլ նեղ օ՞ր, ախպեր ջան, սրանից էլ նեղ օ՞ր...

ՍԻՐԱՆ - Վերջը Ցոլակի ասածն եղավ էլի, Վահրամ ջան, ուրեմն բանակ...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Կամ բանտ, տիկին Սիրան, և մի խաթարված կենսագրություն: Բայց ես ձեզ ոչինչ չեմ առաջարկում: Ես միայն բացատրում եմ իրողությունը: Վճռեք ինքներդ: Եվ հիշեք. ես ձեզ ոչինչ չեմ առաջարկում: Սա նուրբ հարց է: Հետո ուրիշ խոսակցություն չլինի:

ՎԱՀՐԱՄ - Բա եղա՞վ, ընկեր Վարդանյան, ուրիշ հնար կա՞ չես անո՞ւմ:

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Անձամբ ես այլ ելք չեմ տեսնում: Բայց երրորդ անգամ եմ կրկնում՝ վճռեք ինքներդ:

ՎԱՀՐԱՄ - Դե ուրեմն՝ թող գնա:

ՄԻՐԱՆ - Վահրամ ջան...

ՎԱՀՐԱՄ - Էլ ծպտուն չլսեմ, Սիրան: Ուզում ես քա՞նտ գնա տղեդ, ուզում ես խայտառակ լինենք աշխարհով մեկ...

ՄԻՐԱՆ - Չէ, չէ, ցավդ տանեմ, բայց ի՞նքն ինչ կասի, կգնա՞...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Դե, գիտեք ինչ, ինձ թվում է, թե նա հիմա արդեն լավ գիտի իր վիճակը: Այնպես որ ես կփորձեմ հասկացնել նրան:

ՎԱՀՐԱՄ - Հա, դու խոսիր, դու խոսիր, ընկեր Վարդանյան: Նա քեզ շատ է հարգում, կլսի:

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Դե լավ... Հիմա հենց որ ներս մտնի, դուք դուրս եկեք անմիջապես: Տեսնենք ի՞նչ է ստացվում... *(ձայն է լսվում)* Ինքը չէ՞...

*(Ներս է մտնում Ցոլակը՝ այլայլված)*

ՅՈՒՍԿ - Մամա, մամա ջան...

*(Նկատում է Վարդանյանին, լռում է)*

ՄԻՐԱՆ - *(Մեկնվում է դեպի որդին)* Արևիդ մատաղ, տղա ջան... Էդ ի՞նչ սև...

ՎԱՀՐԱՄ - Վերջ: Առանց անձրևի: Դուրս արի, Սիրան: Ցոլակ, ընկեր Վարդանյանը խոսելու բան ունի քեզ հետ...

*(Դուրս են գալիս)*

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Նստիր, նստիր, տղաս ...

ՅՈՒՍԿ - Ընկեր Վարդանյան, ազնիվ խոսք... Որ Վասյան ու... երկու ոտքն էլ չկա... ու մյուս վիրավոր տղաները... չհասկացա, թե ինչ եմ անում: Ո՞ւմ մտքով կանցներ... հավատացեք, խնդրում եմ, ուրիշ ժամանակ թուրք գողանալու համար փորձել եմ Արշակ աղբարենց ցանկապատն անցնել, չեմ կարողացել... ապակիներ են... բայց երեկ մեկ էլ իրեն-իրեն...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Իրեն-իրեն... Տեսնո՞ւմ ես, թե ուր է հասցնում իրեն-իրենը, Ցոլակ...

ՅՈՒՆԱԿ- Քիչ առաջ կապիտան Սեդրակյանը ասաց... Որ ինձ բանտ տանեն, ես ինձ կսպանեմ, ընկեր Վարդանյան... Բա որ Մելիքն իմանա... Բա որ մեր դասարանցիները իմանան... *(Հիստերիկայի մեջ)* Ես ախր գող չեմ, ընկեր Վարդանյան, ես կյանքումս... ես ախր մերոնցից թաքուն, դասերից հետո ամեն օր կայարան եմ գնում, բեռներ եմ թափում, որ մի քանի կոպեկ ստանամ... Մի նվեր առնեմ Մարոյի համար, մի հատ շաքար-աքլոր տամ Տիգրանին... Բա ես գո՞ղ եմ...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Ինչ ասեմ, փաստորեն դժբախտ հանգամանքների զուգորդում է... Սակայն իրավաբանորեն քո արարքը, Յուլյակ, ընդամենը մի անուն ունի՝ գողություն: Իսկ գողության համար, ինչպես հայտնի է կալանք է նախատեսված: Բանտ:

ՅՈՒՆԱԿ - *(Հուսահատ)* Ուրեմն ես ինձ կսպանեմ... Կգնամ ու տրամվայի տակ կընկնեմ...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Տրամվայը միշտ էլ կա, տղաս... սպասիր, գուցե մի ավելի խելոք բան մտածենք...

ՅՈՒՆԱԿ - Ի՞նչ մտածենք, ընկեր Վարդանյան, կապիտան Սեդրակյանը հրեն դռան մոտ սպասում է... էլ ի՞նչ մտածենք...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Կապիտան Սեդրակյանն իր գործն է անում, Յուլյակ... Մենք էլ մեր գործը պիտի անենք: Քիչ առաջ ես երկար խոսեցի քո ծնողների հետ: Դու հո լավ գիտես, թե որքան եմ հարգում ուստա Վահրամին... Ի վերջո մենք համահեղինակակից գյուտարարներ ենք, և տիկին Սիրանին նույնպես: Նրանք մի բան են առաջարկում... Այսինքն՝ գաղափարն իմն է, բայց շատ դժվար հարց է: Եթե դա կարողանանք իրագործել, կարծես թե կարելի է խուսափել բանտից:

ՅՈՒՆԱԿ - Վայ, ընկեր Վարդանյան, ինչ ասեք, կանեմ, ինչ ասեք կանեմ...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Մտածում եմ, թե գուցե կարողանանք բանակ ուղարկել քեզ, Յուլյակ:

ՅՈՒՆԱԿ - Բանակ՞: Կարմի՞ր... այսինքն...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - *(Ակամա ծիծաղում է)* Կարմիր, իհարկե կարմիր ...

ՅՈՒՆԱԿ - Վայ, ձեր ցավը տանեմ, ընկեր Վարդանյան... ներողություն... ախր դա հենց իմ ուզածն է: Էլ չեմ կարողանում մնալ, խեղդվում եմ: Որ ուղարկեք, հենց վաղն էլ կգնամ: Հենց վաղը...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Այսպես թե այնպես, եթե վաղը չստացվի, ես քեզ բանտից չեմ կարող փրկել, տղաս... Բայց չգիտեմ տարիքիդ հարցն ինչ անեմ, տարիքիդ հարցը: Ախր դու դեռ տասնյոթ տարեկան ես... Քեզ բանակ չեն թողնի...

ՅՈՒՆԱԿ - Մի բան արեք, էլի, ընկեր Վարդանյան... Մի բան արեք, էլի...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Դե լավ, մի էլք կա, ընդամենը մի էլք: Ես դա կանեմ, բայց ոչ ոք, ոչ ոք, նույնիսկ քո ծնողները այդ մասին չպետք է իմանան...

ՅՈՒՆԱԿ - Ինչպե՞ս թե... բա որ բանակ գնամ, հայրիկն ու մաման չե՞ն իմանա...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Կիմանան, իհարկե, կիմանան, որ դու բանակ ես գնում, բայց չպետք է իմանան, որ դու գնում ես ոչ թե իբրև Յուլակ Սամվելյան, այլ իբրև Թելման Վարդանյան:

ՅՈՒՆԱԿ - Թելման Վարդանյա՞ն ... Ձեր Թելմանի տե՞ղը...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Այո: Ուղղակի հաջողություն կարելի է համարել, տղաս, որ Թելմանին ծանուցագիր են ուղարկել: Վաղը նրան կանչել են զինկոմիսարիատ: Թելմանի փոխարեն, նրա փաստաթղթերով կներկայանաս դու...

ՅՈՒՆԱԿ - Բայց դա...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Ես էլ նրան գյուղ կուղարկեմ, որ ոչ ոք չտեսնի, իսկ մի տարի հետո քո փաստաթղթերով էլ նա բանակ կգնա: Գիտեմ, Թելմանը շատ կբարկանա, որովհետև ինքն էլ օր առաջ ռազմաճակատ է մղվում, բայց ես ուրիշ ոչ մի էլք չեմ գտնում իմ բարեկամի որդուն բանտից փրկելու համար: Դու ինձ հասկանո՞ւմ ես, Յուլակ:

ՅՈՒՆԱԿ - Իհարկե, հասկանում եմ, ընկեր Վարդանյան, և ձեզանից շատ, շատ շնորհակալ եմ, որ փրկում եք ինձ: Ինձ որ բանտ տանեին՝ հաստատ, հաստատ մի օր էլ չէի ապրի: Չասեք մեծ-մեծ խոսում է, բայց ես հո երեխա չեմ: Սրանից հետո մինչև կյանքիս վերջը երախտապարտ եմ ձեզ, ընկեր Վարդանյան, դուք ինձ համարեք ձեր որդին...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Դե լավ, լավ, իրականում այդպես էլ կա, Յուլակ, չե՞ որ այսուհետև դու իմ որդին ես՝ Թելման Վարդանյանը: Հը՞ ...

ՅՈՒՆԱԿ - *(ծիծաղում է)* Մենակ թե չգիտեմ ինչ եմ անելու, որ հանկարծ չմոռանամ... վախենում եմ կանչեն՝ Թելման, ես էլ ձայն չհանեմ... Ախր ո՞նց կարելի է ապրել ուրիշի անունով...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Դեռ ուշ չէ, տղաս, գուցե ամեն ինչ թողնենք այնպես, ինչպես կա՞... Չե՞ որ ես միայն քո լավն եմ ուզում...

ՅՈՒՆԱԿ - Չէ, չէ, արդեն ասել եք, ընկեր Վարդանյան... Արդեն ասել եք:

## ՊԱՏԿԵՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

*(Նույն սենյակը: Գիշեր է: Մոմի լույսի տակ, տիրամոր լուսանկարը երկու ձեռքով բռնած աղոթում է Միրան մայրիկը)*

ՄԻՐԱՆ - Սուրբ տիրամայր, ես քո ոտքի հողն եմ, լսիր իմ աղաչանքը: Դու կհասկանաս ինձ, որովհետև դու էլ մայր ես ու գիտես թե ինչքան դժվար բան է երեխա ծնելն ու մեծացնելը: Ավագակներն ու անհավատները անմեղ տեղը խաչեցին քո որդուն, մի թող, որ մեր զավակներին էլ խաչեն: Մեղք են, ջահել են: Մեղա, մեղա քեզ, սուրբ կույս, բայց ես էլ անհավատ եմ եղել, գոռոզ եմ եղել ու հմբարտ, կարծել եմ, թե, իմ աստվածն իմ ընտանիքն է: Եվ աստված պատժեց ինձ ու աշխարհով մեկ ցրիվ է տվել իմ տղաներին: Մեղա, մեղա քեզ, տիրամայր: Ես բոբիկ ոտքերով սուրբ Էջմիածին կգնամ, յոթն անգամ չոքելով պտույտ կգամ մայր վանքիդ չորս կողմը, յոթ հատ մոմ կվառեմ քեզ համար, մենակ թե բարի ձեռքդ պահիր իմ Մելիքի գլխին ու Ցուլակի գլխին... Մելիքի ու Ցուլակի, աստվածածին: Պահիր պահպանիր իմ խեղճ գառնուկներին, ով երկնային թագուհի, և նմանապես Անդրանիկ Խուրշուդյանին, Նազիկի երեխաների հորը, Ալբերտ Ստեփանյանին, մեր հարևան տիկին Բերսաբեի որդուն, Թելման Վարդանյանին, մեր բարերար ու փրկարար ընկեր Վարդանյանի մինուճարին, որ իմ Ցուլակի հետ նույն օրը պատերազմ գնաց: Մեզ հաց բերող պառավ նանի երեք որդիներին էլ պահպանիր, ով աստվածածին, ես անունները չգիտեմ, բայց դու հո բոլորին էլ ճանաչում ես ու ամեն ինչ տեսնում ես քո երկնային գահից: Եվ պահպանիր ու մայրություն արա բոլոր հայ որբերին, մեղք ենք, ծեծված ենք, հավատի համար խաչված մի բուռ ժողովուրդ ենք: Եվ նմանապես կարեկից եղիր բոլորին, ովքեր ֆրոնտում են, մի թող թափվի երեխաների անմեղ արյունը, որովհետև բոլորն էլ մեր ունեն, իսկ դու աստծո մայրն ես և ուրեմն մայրն ես աշխարհի: Նախ և առաջ բոլորին հասիր, բայց և մի մոռանա իմ Մելիքին ու Ցուլակին. Մելիք Վահրամի Սամվելյանին և Ցուլակ Վահրամի Սամվելյանին, աստվածածին:

Ես քո դուլն եմ, տիրամայր և քո աղախինը, և կյանքս մատաղ կանեմ քո սուրբ անունի համար: Տեր Դուկասի խորհրդով ամեն գիշեր տեսրակի թղթի վրա թաքուն գրում ու տարածում եմ եկեղեցու սուրբ պատվիրանները: Մենակ թե շատ կներես, որ ծուռ ու մուռ և սխալներով եմ գրում, որովհետև ընդամենը մի կերպ լիկկայան եմ ավարտել: Ի՞նչ անեմ... Ամեն:

## ՊԱՏԿԵՐ ՎԵՑԵՐՈՐԴ

*(Շենքի տանիքը: Սաթիկը հերթապահի սեղանն է սրբում: Տիգրանը ինչ-որ լրագրի նայելով, Եվրոպայի քարտեզի վրա տեղափոխում է փոքրիկ, կարմիր դրոշակները: Երեխաները նկատելիորեն մեծացել են: Դա զգացվում է և դեմքերից, և հագուստից, և սանրվածքից):*

ՍԱԹԻԿ - Այ տղա, մի քիչ արագ-արագ առաջ տար, էլի...

ՏԻԳՐԱՆ - Է, Սաթիկ ջան, իմ ձեռքին որ լիներ, մի դրոշակ կթողնեի ու այն էլ կտանեի ու կխրեի ճիշտ Բեռլինի վրա: Հիմա կարևորն այն է, որ դրոշակները այն կողմ եմ տանում... այն կողմ...



ՍԱԹԻԿ - Հիշո՞ւմ ես, Տոլակը ոնց էր վախենում, թե մինչև իրեն բանակ կանչեն, պատերազմը կավարտվի:

ՏԻԳՐԱՆ - Այնինչ քիչ է մնում հերթն ինձ հասնի ու վերջն էլ չի երևում:

ՍԱԹԻԿ - Չլինի՞ վախենում ես:

ՏԻԳՐԱՆ - Հա, Սաթ ջան, վախենում եմ մերոնց համար: Շատ են խեղճացել ու ծերացել են միանգամից: Մաման ասում է՝ քեզ էլ որ տանեն, կմեռնեն...

ՍԱԹԻԿ - Բա իմ մաման ... Անընդհատ խոսում ու ծիծաղում է, չէ՞՞: Բոլորն ասում են՝ Նազիկի նման ուրախ ու անհոգ կին չկա: Բայց դու գիտե՞ս, որ գիշերներն էլ լաց լինում, Տիգ: Վերմակը գլխին է քաշում ու լաց լինում խեղդվելով, լաց է լինում առանց ձայնի, ցնցվելով, որ մենք չլսենք: Քանի անգամ եմ տեսել: Իսկ առավոտյան էլի ծիծաղում է ու ծաղրում է բոլորին էլ, իրեն էլ:

ՏԻԳՐԱՆ - Էլի Անդրանիկ քեռու հաստոցի վրա՞ է աշխատում:

ՍԱԹԻԿ - Հա, բայց արդեն շատ է հոգնել, ցավում են ձեռքերը: Էն օրն էլ Լիզային ասում էր, այ մարդ, Անդրանիկը չէր թողնում, որ ջրով լիքը վեղրոն ես բարձրացնեմ, իսկ հիմա ականներ եմ բարձրացնում ու տաշում, չի գալիս, որ վերցնի ձեռքիցս: Հեշտ գործ է գտել, մի թեթև հրացան առած վազում է իր համար... ինձ թվում է, թե Անդրանիկն է ես պատերազմը ձգձգում... ու Լիզան հո չէր ծիծաղում...

ՏԻԳՐԱՆ - Ճիշտն ասած, ես էլ էի կարծում, թե Նազիկ մորքուրը երբեք չի ընկճվում...

ՍԱԹԻԿ- Էհ...

ՏԻԳՐԱՆ - *(Խոսելու հետ միաժամանակ լրագիրն է կարդում)* Սաթիկ, աչքերիս չեմ հավատում, Սաթիկ...

ՍԱԹԻԿ - Հը՞...

ՏԻԳՐԱՆ - Թելմանը «Կարմիր աստղ» շքանշան է ստացել:

ՍԱԹԻԿ - Ո՞վ:

ՏԻԳՐԱՆ - Թելմանը: Թելմանը, ընկեր Վարդանյանի և մի թիզ թիթիզը, իբրև թե չես հիշում, նա, որ քեզ չամիչ ու փշատ էր տալիս...

ՍԱԹԻԿ - Չի կարող պատահել...

ՏԻԳՐԱՆ - Խնդրեմ... Կարդա... պարզատրել էն Կարմիր աստղի շքանշանով... ըհը... Թելման Ավետիքի Վարդանյան... Այ քեզ բան... Ո՞ւմ մտքով կանցներ...

ՄԱԹԻԿ - Տեսնո՞ւմ ես... իսկ դու ծաղրում էիր... Ուրեմն ընկեր Ղևոնդյանը ճիշտ էր ասում, որ երբեք չես իմանա, թե ով կհերոսանա պատերազմում...

ՏԻԳՐԱՆ - Գուցե ճիշտ է, գիտես, ասում են թե Մատրոսովն էլ, նույնիսկ Մատրոսովն էլ դպրոցում մեկ-մեկ փախել է դասերից: Ինչ էլ որ լինի, կեցցես Թելման Վարդանյան: Աչքիս շատ բարձրացավ:

ՄԱԹԻԿ - Հիմա ընկեր Վարդանյանը ավելի ուռած-փքված ման կգա... Իսկ Ցոլակից ինչ լուր, Տիգ, նամակներ ստանո՞ւմ եք:

ՏԻԳՐԱՆ - Հա, շուտ-շուտ գրում է: Բայց տարօրինակը գիտե՞ս որն է: Նա խնդրում է, որ անձամբ իրեն նամակներ չգրենք: Մի վրացի ընկեր ունի, նրա հասցեով ենք ուղարկում:

ՄԱԹԻԿ - Ուրեմն հետախույզ է, թշնամու թիկունքում է գործում:

ՏԻԳՐԱՆ - Ճիշտն ասած՝ ես էլ եմ այդպես մտածում: Ցոլակն ինչ ուզենար կդառնար: Նա որ ուզենա, հերոս էլ կդառնա...

ՄԱԹԻԿ - Ես շատ եմ սիրում Ցոլակին, Տիգ...

ՏԻԳՐԱՆ - Հասկացանք, էլի...

ՄԱԹԻԿ - Շատ...

ՏԻԳՐԱՆ - Լավ ես անում...

ՄԱԹԻԿ - Ես քո երկու եղբորն էլ սիրում եմ, Տիգ, Մելիքին էլ շատ եմ սիրում ու խղճում եմ...

ՏԻԳՐԱՆ - Քանի ամիս է ոչ մի նամակ չենք ստանում: Խեղճ մամաս գրբացների տնից դուրս չի գալիս: Մի օր Կոնդ է գնում, մի օր Սարի թաղ... Խեղճ հայրիկս չարչարվում, տանջվում է գործարանում, իսկ մաման նրա բերած փողերը տանում գրբացներին է տալիս...

ՄԱԹԻԿ - Մարոյին է՞լ չի գրում:

ՏԻԳՐԱՆ - Չգիտեմ, Մաթիկ ջան, բան չեմ հասկանում: Հայրիկը քանի անգամ ինձ Մարոյենց տուն է ուղարկել, բայց նրանց դուռը միշտ փակ է: Հարևաններին հարցնում եմ, ուսերն են թափ տալիս: Չեմ հասկանում, թե ուր կարող է գնացած լինել: Գուցե ինքն էլ է ռազմաճակատ գնացել, Մելիքի մոտ: Ասում էր՝ չեմ կարող առանց նրա ապրել: Ախր շատ էր սիրում նրան: Բայց գնալուց առաջ չէ՞ր գա մեր տուն, մի բան չէ՞ր ասի...

ՄԱԹԻԿ - Ինչ ասեմ...

ՏԻԳՐԱՆ - Չէ, հասկանո՞ւմ ես, սկզբում անընդհատ Մարոյին էր գրում, և մաման լաց էր լինում դրա համար: Հետո սկսեց մեզ շուտ-շուտ գրել, բայց ամեն նամակում Մարոյից էր հարցնում: Ու մաման լաց էր լինում էլի... Ու հետո միանգամից կտրվեցին նամակները... Խեղճ հայրիկս արդեն գիշերներն էլ չի քնում, ծխում ու քայլում է պատից պատ, ծխում ու քայլում է պատից պատ... Իսկ Մարոն...

ՍԱԹԻԿ - Քո Մարոն Մելիքի ճկույթն էլ չարժե, Տիգրան...

ՏԻԳՐԱՆ - Դե, դե, Մարոյի մասին բան չասես...

ՍԱԹԻԿ - Քո Մարոն Մելիքի ճկույթն էլ չարժե, Տիգրան... Քո Մարոն ստոր, մորթապաշտ, թեթևալիկ աղջիկ է, Տիգրան: Ես զզվում եմ նրանից, ես նրան այ իմ էս ձեռքերով կխեղդեի, որովհետև... որովհետև... *(Հեկեկում է)*

ՏԻԳՐԱՆ - Ի՞նչ պատահեց քեզ, Սաթիկ, ինչե՞ր ես խոսում, այդ ինչե՞ր ես ասում...

ՍԱԹԻԿ - Ես վաղուց գիտեի, բայց... բայց ձերոնց էի խղճում, չէի ուզում ասել քեզ... Ասում էի, ով գիտե... Բա Մելիքը մեղք չէ՞, քանի տարի պատերազմում է, ամեն օր մահն աչքի առաջ, կովում է քեզ համար, ինձ համար, հերոսի մեղալ ունի, սիրում է քեզ, հավատում է քեզ, գրում է թե... ինձ շուտ-շուտ նամակ գրի, որ ես ապրեմ... Ու դու... դու սպանում ես նրան, հա՞, տականք, փչացած... Հայրենիքի զինվորին ո՞ւմ հետ ես փոխում...

ՏԻԳՐԱՆ - Սաթիկ, Սաթիկ ջան, ոչինչ չեմ հասկանում... դե հանգստացիր, լավ, ի՞նչ անեմ, ջուր տա մ... Կարգին ասա՝ բան հասկանամ: Դու ինչ-որ բա՞ն գիտես, դու ինչ-որ բա՞ն ես տեսել...

ՍԱԹԻԿ - Բհարկե: Արդեն քանի ամիս է այդ Մարո կոչվածը քարշ է գալիս՝ մի տարիքով մարդու հետ... Հարյուր անգամ տեսել եմ: Սկզբում կարծում էի, թե ազգական է, ախր քսան տարով մեծ կլինի Մարոյից: Իսկ հետո, իսկ հետո...

ՏԻԳՐԱՆ - Սուտ կլինի, Սաթիկ, անհնարին բան ես ասում: Երևի իսկապես ազգական է...

ՍԱԹԻԿ - Երևի... Մենակ թե ոնց է ամուսնացել հետը, չեմ հասկանում...

ՏԻԳՐԱՆ - Սաթիկ, այդ ի՞նչ ես ասում, Սաթիկ... Մեր Մարոն... դու քո աչքո՞վ ես տեսել... բա հիմա ես ի՞նչ անեմ...

ՍԱԹԻԿ - Ես ի՞նչ իմանամ...

ՏԻԳՐԱՆ - Ես նրան կսպանեմ...

ՍԱԹԻԿ - Պահ, հիմար-հիմար բաներ մի խոսի, այդ էր մնացել, որ մի փչացածի համար քեզ էլ բանտ նստեցնեն... Բա նա արժանի՞ է դրան... Բա ես քեզ կթողնեմ մ...

ՏԻԳՐԱՆ - Բայց ես նրան պիտի տեսնեմ, Սաթիկ, ես ուզում եմ նրան տեսնել ու նայել նրա աչքերի մեջ...

ՍԱԹԻԿ - Երբ որ ուզենաս, ես քեզ հետ եմ: Առանց ինձ չպիտի գնաս, լսո՞ւմ ես:

ՏԻԳՐԱՆ – Ուրեմն միասին կգնանք... Վախ, Մելիք ջան, որ իմանա, ինչ կանի ախպերս... Վախ ախպեր ջան... Կանչում էր. «Մամա, ինձ համար պահեք էդ աղջկան... մամա...»: Բա հիմա ինչ պատասխան ենք տալու նրան: Բա չի՞ ասի՝ էդ չէի՞ ք...

ՍԱԹԻԿ - Դե լավ, Տիգ ջան, հանգստացիր... Մենք ի՞նչ մեղավոր ենք: Թաղեմ նրա արևը... Դե, դե, դու արդեն տղամարդ ես, տես՝ բեղերդ էլ գալիս են արդեն, թե՞ մատիտով ես ներկել, այ տղա.. Արդեն դու ես մեր հույսը ու դու էլ լա՞ց ես լինում... Բա ի՞նչ, տես՝ պապաս բանակում է, Մելիքն ու Յոլակը բանակում են, բա որ նեղացնեն ինձ՝ ո՞վ է պաշտպան կանգնելու...

ՏԻԳՐԱՆ - Մի թող փորձեն...

ՍԱԹԻԿ – Ըհը, հիմի արդեն քեզ նման ես...

ՏԻԳՐԱՆ - Օհ, ես էլ մի ցավ ու ինչ ցավ, ինչ ցավ...

ՍԱԹԻԿ - Ինչո՞ւ, Տիգրան ջան, ուրիշ բան է՞լ է պատահել...

ՏԻԳՐԱՆ - Շատ վատ բան, Սաթիկ ջան, շատ ու շատ վատ բան: Միայն թե խնդրում եմ ոչ ոքի չասես, հա՞ ...

ՍԱԹԻԿ – Տիգրան...

ՏԻԳՐԱՆ - Ալբերտի սև թուղթն է եկել, Սաթիկ:

ՍԱԹԻԿ - Ալբերտի՞ ... տիկին Բերսաբեի՞ ...

ՏԻԳՐԱՆ - Հա...

ՍԱԹԻԿ – Աման... ե՞րբ, Տիգրան...

ՏԻԳՐԱՆ - Արդեն մի շաբաթ է ծոցիս մեջ է: Չգիտեմ ինչ անեմ... Մեր փոստատարը տվեց ինձ, էդ հարբեցող շան որդին... Հենց որ նամակներ է բերում, ինքն է անձամբ հանձնում... Բա իհարկե, որ մաղարիչ ուզի, խմելու բան տան... Իսկ հենց որ սև թուղթ է՝ մեզ է բռնում...

ՍԱԹԻԿ - Բա ինչո՞ւ դու վերցրիր:

ՏԻԳՐԱՆ - Չիմացա ինչ է, Սաթիկ ջան, տվեց, ասաց. Տիգրան ջան նամակ է տիկին Բերսաբեին, ոտքերիս վրա հալ չկա՝ երրորդ հարկ բարձրանալու, տար իրեն տուր, քեզ

մատաղ... վերցրեցի ու վազելով վերև էի բարձրանում, ասացի տեսնեմ որտե՞ղ է հիմա Ալբերտը, նայեցի ծրարին ու... տեսա որ սև թուղթ է...

ՄԱԹԻԿ - Խեղճ Ալբերտ, ինչ խենթուկ տղա էր... Հիշո՞ւմ ես պարաշյուտ էր սարքել, ուզում էր թռչել իրենց պատշգամբից... տիկին Բերսաբեն հազիվ բռնեց վերջին բռայեին...

ՏԻԳՐԱՆ - Կխելագարվի տիկին Բերսաբեն... Հարյուր տարի էլ մնա, ես էս սև թուղթը նրան չեմ տա...

ՄԱԹԻԿ - Բա ի՞նչ պիտի անես, Տիգրան...

ՏԻԳՐԱՆ - Հետո մտածում եմ, թե ով գիտի, գուցե սխալմամբ են ուղարկել. Քի՞չ է պատահում... Ասում են կապիտան Սեդրակյանի եղբայրը բանակից վիրավոր տուն է եկել ու իր ձեռքով ստացել իր սև թուղթը... Դրա համար էլ, Սաթիկ ջան, գուցե ընդհանրապես չտանք, հը՞, մի տեղ պահենք մինչև տեսնենք ինչ է լինում...

ՄԱԹԻԿ - Բա ո՞րտեղ պահենք, Տիգրան... ես... ես դրան ձեռք չեմ տա...

ՏԻԳՐԱՆ - Է, Սաթիկ ջան, թուղթ է, էլի... Ըհը, հենց քո աչքի առաջ էլ կթաղեմ հողի մեջ...

*(ձեռքի դանակով փորում է հողը, թաքցնում ծրարը)* Որ եթե ես չլինեմ, ու պետք լինի, դու հանես...

ՄԱԹԻԿ - Ինչպես թե չլինես, բա ո՞րտեղ պետք է լինես, Տիգրան...

ՏԻԳՐԱՆ - Կյանք է, էլի, Սաթ ջան ու էն էլ պատերազմական կյանք... Քի՞չ բան ենք տեսել: Ինչ էլ ասես կարող է պատահել, չէ՞: Մի օրվա մեջ մենք հիմա ավելի շատ բան ենք տեսնում ու լսում, քան թե պատերազմից առաջ մի տարվա մեջ:

ՄԱԹԻԿ - Օհո, արդեն լրիվ մեծավարի ես խոսում: Ուրեմն բեղերդ հաստատ չես ներկել... դե լավ, լավ, կատակ եմ անում... Գիտես, Տիգրան, որ ասացիր՝ պատերազմից առաջ... սիրտս հանկարծ այնպես ցավաց, ախր մենք լրիվ մոռացել ենք «պատերազմից առաջ»-ը, մնացել է միայն պատերազմը, անիծյալ պատերազմը, տեսնես կգա մի օր, որ ասենք «պատերազմի ժամանակ, ինչքան հիշում եմ», հասկանո՞ւմ ես, էսպես, անփութորեն, ասես ի միջի այլոց ասենք «Հա, հա, եթե չեմ սխալվում, պատերազմի ժամանակ...» Այդ օրը կգա՞, Տիգ...

ՏԻԳՐԱՆ - Սաթ, հիշո՞ւմ ես, մի ժամանակ ասում էիր, մրսում եմ, Տիգրան...

ՄԱԹԻԿ - Էհ, մեծացանք, Տիգրան...

ՊԱՏԿԵՐ ՅՈԹԵՐՈՐԴ

ՏԻԳՐԱՆ - Մարո՞...

ՄԱՐՈՆ - Ես եմ, Տիգրան...

ՏԻԳՐԱՆ - Ու դու... ու դու... *(Հանկարծ փղձկում է)* Էս ի՞նչ արեցիր, Մարո ջան: Էս ի՞նչ արեցիր... Ճի՞շտ է, որ...

ՄԱՐՈՆ - Ճիշտ է, Տիգրան ջան: Ես չգիտեմ ոնց բացատրեմ քեզ...

ՏԻԳՐԱՆ - Բայց դու սիրում էիր Մելիքին, չէ՞, սիրում էիր...

ՄԱՐՈՆ - Միրում էի, Տիգրան, կյանքիս չափ էի սիրում, բայց...

ՏԻԳՐԱՆ - Ի՞նչ բայց, ի՞նչ բայց, խաղ է հա՞, սիրում էի, հիմա չեմ սիրում...

ՄԱՐՈՆ - Ամեն ինչ շատ-շատ ավելի բարդ է, ախպերիկ ջան, քան դու կարծում ես: Ուզո՞ւմ ես հեշտացնեմ քո գործը: Եթե սիրող կթեթևանա, ուզո՞ւմ ես քո փոխարեն ասեմ, որ ես սուտ ու ստոր աղջիկ եմ, որ ես տականք եմ, որ ես արժանի չեի Մելիքի սիրուն, ավելին... որ ես դավաճան եմ... Ամեն ինչ էլ կարելի է ասել, Տիգրան ջան, բայց կյանքը շատ ավելի բարդ է ու բառերով ամեն ինչ ասել չի լինի...

ՏԻԳՐԱՆ - Ես ոչինչ չհասկացա ու չեմ էլ ուզում հասկանալ, Մարո: Ես քեզ ընդամենը մի բան եմ հարցնում: Ինչո՞ւ չսպասեցիր Մելիքին: Ախր դու սիրում էիր նրան, ու ինքն էլ հավատում էր քեզ: Ինչո՞ւ չսպասեցիր Մելիքին, Մարո:

ՄԱՐՈՆ - Ինչ անեմ, ինչ անեմ...

ՏԻԳՐԱՆ - Ճիշտն ասա, ես հո երեխա չեմ:

ՄԱՐՈՆ - Մելիքը չկա, Տիգրան:

ՏԻԳՐԱՆ - Ի՞նչ, ի՞նչ...

ՄԱՐՈՆ - Իմ Մելիքը վաղուց չկա, Տիգրան: Դու ստիպեցիր ասել: Ու քանի որ երեխա չես, պիտի սովորես դիմանալ ցավերին: Տարուց ավելի է, որ զոհվել է Մելիքը, ախպեր ջան...

ՏԻԳՐԱՆ - Վայ, Մարո ջան, էդ ի՞նչ ես ասում, վախ Մելիք ջան, Մարո ջան, քեզ ո՞վ ասաց, սուտ կլինի, սուտ կլինի, որ զոհվեր, բա չէի՞նք ստանա սև թուղթը:

ՄԱՐՈՆ - Սև թուղթը ես եմ ստացել...

ՏԻԳՐԱՆ - Ո՞նց թե, երբ... վախ, ախպեր ջան...

ՄԱՐՈՆ - Դուրս էի գալիս ձեր տնից... Փոստատարն ինձ տվեց ու ես էլ ոչինչ չզգացի... Միայն տեսա, որ ջուր են շաղ տալիս ինձ վրա ու ես էլ ընկած եմ մայթին...

ՏԻԳՐԱՆ - Ուրեմն էն որ ուշաթափվել էիր... սովից չէ՞ր եղել...

ՄԱՐՈՆ – Էդ սև օրն էր, Տիգրան ջան... Չուզեցի ձերոնց սպանեմ... ասացի որ տուն տանեն ինձ:  
Մի տարի է ողբում եմ մեն-մենակ: Եթե իմանաս ինչքան դժվար բան է աշխարհում  
մեն-մենակ ապրելը... մեն-մենակ...

ՏԻԳՐԱՆ - Ուրեմն էն նամակները որ կարդում էիր մերոնց...

ՄԱՐՈՆ - Ես էի գրում... խաբում էի ձեզ էլ, ինձ էլ: Չէի ուզում, որ հայրիկդ ու մայրիկդ իմանան,  
խղճում էի... Ու հետո էլ մտածում էի, թե գուցե սխալ է, թյուրիմացություն է, ինչեր  
ասես չեն պատահում, սպասում էի, որ հրաշք լինի: Բայց ինչպես երևում է, հրաշքը  
միայն ուրիշների հետ է կատարվում: Մտածում էի, թե միայն համբերել է պետք ու  
սպասել, մտածում էի, որ եթե շատ սպասես... *(Լաց է լինում)*

ՏԻԳՐԱՆ - Ու էլ չկարողացար սպասել...

ՄԱՐՈՆ - Չկարողացա, Տիգրան ջան, չկարողացա: Եթե իմանաս ինչքան էի հոգնել սպասելուց,  
խաբելուց, սպասելուց: Այլևս չէի կարողանում ձերոնց աչքերին նայել: Ես էլ մեղք եմ,  
չէ՞, ես էլ եմ մխիթարանքի կարոտ... Ես գիտեմ, գիտեմ, ախպերիկ, որ այլևս երբեք,  
երբեք երջանիկ չեմ լինելու, գիտեմ, բայց ինչ անեմ, որ չեմ մեռնում, ինչ անեմ, որ  
ապրում եմ...

ՏԻԳՐԱՆ - Բա հիմա ես ինչ անեմ... ես ոնց ապրեմ, Մարո...

ՄԱՐՈՆ - Ի՞նչ ասեմ, ի՞նչ ասեմ, ախպեր ջան...

ՊԱՏԿԵՐ ՈՒԹԵՐՈՐԴ

*(Վարպետ Վահրամի տունը: Միրան մայրիկը ինչ-որ տխուր երգ դնողնալով ոտքով  
աշխատեցնում է կարի մեքենան: Բամբակած բաձկոններ է կարում: Ռադիոն  
խոխոալով քայլերգ է հնչեցնում: Կողքի սենյակից հայտնվում է Վահրամը՝ ձեռքին  
դանակ):*

ՄԻՐԱՆ - Վահրամ ջան, Վահրամ, գլուխս տարավ, դրա ձենը կտրի, էլի, մի կարգին բան չի  
ասում:

*(Վահրամը անջատում է ռադիոն, դանակը ձեռքին մոտենում է իր անկյունին ու սկսում  
տախտակի վրա ծխախոտ կտրատել)*

Լսե՞լ ես, ասում են Շուշիկի տղից միանգամից երեք հատ նամակ է եկել:

ՎԱՀՐԱՄ - Հա...

ՄԻՐԱՆ - *(Հառաչում է)* Բախտավոր... Վահրամ...

ՎԱՀՐԱՄ – Հը...

ՄԻՐԱՆ - Լիզան պատճառավոր է, գիտե՞ս...

ՎԱՀՐԱՄ - Հա՞... Հայրոյի աչքը լույս: Շատ էր տանջվում, որ երեխա չէին ունենում: Հիմա հո չի ուրախանա...

ՄԻՐԱՆ - *(ծիծաղում է)* Օյնբազը ... Լիզային ասել է՝ այ աղջի, երեխան որ մի ձեռանի չծնվի, ուրեմն ինձնից չի, քեզ հորդ տուն եմ ուղարկելու...

ՎԱՀՐԱՄ - *(Ակամա ծիծաղում է)* Շաշի մեկը... Էն օրն էլ Լիզային ասում էր դու իմ աջ ձեռքն ես, աջ ձեռքը, Ռոստովում աջ ձեռքս կորցրեցի ու քեզ գտա:

ՄԻՐԱՆ - Վահրամ...

ՎԱՀՐԱՄ - Հը...

ՄԻՐԱՆ - Ասում են Աշխենի տղից էլ մի տարի նամակ չի եկել, գնացել է Օշական, էնտեղ ասում են մի զարմանալի գրբաց կա, գիր է արել...

ՎԱՀՐԱՄ - Հերիք չի՞, այ աղջի, հերիք չի՞... դրանցից մի ճիշտ բան լսած կա՞ս:

ՄԻՐԱՆ - Շատ:

ՎԱՀՐԱՄ - Շա՞տ: Մի օրինակ բեր: Դե բեր: Իմ դառը դատած փողերով քո գրբացներից առած մի ճիշտ բան ասա:

ՄԻՐԱՆ - Ասեմ:

ՎԱՀՐԱՄ - Ամոթ է, ամոթ է, Սիրան:

ՄԻՐԱՆ - Ասեմ, ասեմ: Գնացել էի Սարի թաղ, Վերգուշ անունով մի կին կա: Ձեռքիս մեջ նայեց ու ասաց, քո ամուսինը պետական շենքում հանդիպել է մի մեծ պաշտոնյայի հետ: Դե ասա, ճի՞շտ է:

ՎԱՀՐԱՄ - Ե՞ս... ի՞նչ պաշտոնյա...

ՄԻՐԱՆ - Ես էլ հարցրեցի ի՞նչ պաշտոնյա... Ասաց լավ չի երևում թե ինչի մասին են խոսել, բայց էդ դիրեկտորը ծիծաղել է ամուսնուդ վրա ու մեջքին թփթփացնելով տուն ուղարկել: Դե ասա, ճի՞շտ է...

ՎԱՀՐԱՄ - Սիրա՞ն:

ՄԻՐԱՆ - Հաջան:

ՎԱՀՐԱՄ - Հաջան էլ ասում է: Քո էդ գրբացը մեր գործարանում է աշխատում:



ՄԻՐԱՆ - Չէ, այ տղա, ասում եմ Մարի թաղում է ապրում:

ՎԱՀՐԱՄ - Սիրա՞ն:

ՄԻՐԱՆ - Հաջան: Դե ասա՝ ճի՞շտ է:

ՎԱՀՐԱՄ - Խնդրեմ: Անունն էլ դրել են ռազմական գործարան: Փակ գործարան: Ներս  
մոնեյուց էլ, դուրս գալուց էլ փաստաթուղթ ենք ցույց տալիս: Պահակ Փանոսն էլ ամեն  
անգամ էնպես զարմացած է նայում երեսիդ, ոնց որ առաջին անգամ է տեսնում, ոնց որ  
օրը հինգ անգամ քեզանից չէ թուրթուն ուզում: Փակ գործարան: Բայց մեջը ոնց որ  
շարժվում ես, դրսում իմանում են:

ՄԻՐԱՆ - Դե ասա, է, ճի՞շտ է՞:

ՎԱՀՐԱՄ - Մինչև չասես ով է ասել, չեմ ասի:

ՄԻՐԱՆ - Հայրոն:

ՎԱՀՐԱՄ - Հայրո՞ն: Ուրեմն քո էդ գրքաց Վերգուշը Հայրոն է, հա՞: Վայ, Հայրո... վայ, թե ձեռքս  
կընկնես...

ՄԻՐԱՆ - Այ տղա, ուրեմն ճի՞շտ էր ասում... Ուրեմն դու միտք ունեիր մեզ թողնել ու էդ  
հալովդ բանակ գնալ, հա՞ ...

ՎԱՀՐԱՄ - Իմ հալին ինչ է եղել...

ՄԻՐԱՆ - Այ Վահրամ ջան, որ հայելուն չես նայում, քեզ թվում է, թե էլի առաջվա Վահրամն  
ես, հա՞: Որ քեզ նայում եմ՝ սիրտս կտոր-կտոր է լինում: Ոտքերիդ վրա հալ չկա, ախր:  
Որ քեզ բանակ էլ տանեն, տեղ չես հասնի, Շահալիում-բանում կմնաս:

ՎԱՀՐԱՄ - Էդ էլ է գրքաց Հայրոն ասել, հա՞ ...

ՄԻՐԱՆ - Դե դու ասա, ճի՞շտը:

ՎԱՀՐԱՄ - Ի՞նչ ասեմ, Սիրան ջան, սիրտս նեղվում է: Էդպես էլ ասացի ընկեր Սեմերջանին:  
Սիրտս նեղվում է, ասացի, ընկեր Սեմերջան, թույլ տվե՞ք բանակ գնալ:

ՄԻՐԱՆ - Հետո՞:

ՎԱՀՐԱՄ - Ընկեր Սեմերջանը, թե իմ սիրտն էլ է նեղվում, ուստա Վահրամ, դու էլ ինձ թույլ  
տուր բանակ գնալ: Բայց ես ո՞վ եմ, ո՞վ եմ, ընկեր Սեմերջան, ասացի: Բա է՞ս ով եմ,  
ասաց ընկեր Սեմերջանը: Կարծում ես ես չե՞մ ուզում գնալ: Ուշքս ու միտքս էնտեղ են,  
ասաց: Երկու տղաներս էլ ռազմաճակատում են: Տունս դատարկ: Չեմ ուզում ներս  
մտնել: Բայց ի՞նչ անեմ: Ի՞նչ անեմ ուստա Վահրամ, առանց զենքի՞ թողնենք մեր  
տղերքին:

ՄԻՐԱՆ - Հետո՞, հետո՞ ...

ՎԱՀՐԱՄ - Էլի խնդրեցի, շատ խնդրեցի: Մեկ էլ հանկարծ կարգադրեց: Ետ դարձ: Ետ դառա: Քայլով մարշ, ասաց, քայլեցի: Կանգ առ: Կարգադրեց: Կանգ առա: Եկավ, մոտեցավ, թփթփացրեց ուսիս: Քո գրքաց Հայրոն ճիշտ է ասել: Ու ծիծաղեց: Էդ ոտքերով մինչև ո՞ւր կհասնես, ախպեր ջան: Ուղիղ գնա ստանոկիդ մոտ ու աշխատի: Մենք էստեղ ավելի շատ ենք պետք մեր երեխաներին, ուստա Վահրամ: Քեզ նման բանվորների ուսին է գործարանը: Էլ չեմ խոսում գյուտերիդ մասին:

ՄԻՐԱՆ - Ուրեմն նեղվում է սիրտդ...

ՎԱՀՐԱՄ - Նեղվում է, Սիրան...

ՄԻՐԱՆ - Բա ես ինչ անեմ: Ես ուր գնամ: Որ Մելիքիս հիշում եմ... Ախր էն աղջիկն էլ...

*(Դռան թակոց: Ներս է մտնում Ավետիք Վարդանյանը: Նրա ձեռքին լրագրի մեջ փաթաթած ինչ-որ բան կա)*

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Բարև ձեզ, իմ բարեկամներ...

ՄԻՐԱՆ - Վայ, բարև, հազար բարի, ընկեր Վարդանյան...

ՎԱՀՐԱՄ - Բարով եկաք: Նստի՛ր, Ավետիք Իսայիչ: Սիրան...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Չէ, դեռ չէ, ես չեմ շտապում, ուստա Վահրամ, թող զակուսկին պատրաստի՛ նոր...

ՎԱՀՐԱՄ - Սիրան...

ՄԻՐԱՆ - *(Շփոթված տարածում է ձեռքերը)* Թթու բերե՞մ...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Չէ, տիկին Սիրան, խնդրում եմ՝ նախ սա խաշի... թարխուն ունե՞ք:

ՎԱՀՐԱՄ - *(Ապշած)* Չուկ է՞ ...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Իշխան: Հենց նոր Սևանից բերեցին քթոցով: Դեռ խլբլբում էին: Չորս հատ բերել էին, ասացի, ինչպես միշտ՝ հալալ կեսը ուստա Վահրամին եմ տանելու...  
*(Բացում է փաթեթը)*

ՄԻՐԱՆ - Իշխան է... Ես հենց հիմա, թարխուն ունեմ, ունեմ, հենց հիմա, վախ, քոռանամ ես, Ցոլակս էստեղ լինե՛ր մի կտոր ուտե՛ր: Ուշքը գնում էր իշխանի համար... վախ...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - *(Գրպանից մի փաթեթ է հանում)* Եվ ինչպես միշտ հոնորարի հալալ կեսն էլ քեզ, ուստա Վահրամ: Հաշվիր, երկու հազար ռուբլի է...

ՎԱՀՐԱՄ - Վայ, բա ամոթ չի՞ ... ասում է՝ հաշվի... էս որի համար է, ընկեր Վարդանյան...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Հաստոցի պտույտներն արագացնող մեր սարքի համար:

ՎԱՀՐԱՄ - Է, դրա համար էլ են փող տալի՞ս: Մի շաբաթում սարքեցի:

ՍԻՐԱՆ - Այ մարդ, ինչի՞ ես եղպես ասում, էդ մի շաբաթվա մեջ մենակ հինգ հարյուր մանեթի պայպիրոս փստացրաց կլինես... *(ծիծաղում են)*

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Գյուտեր կան, որ մի վայրկյանում են արվում, ուստա Վահրամ, բայց արվում են դարերի համար: Դե ես ինչպես պետքն էր զծագրեցի, ներկայացրի, անցավ...

ՍԻՐԱՆ - Վայ, արևդ ապրի, ընկեր Վարդանյան, առանց քեզ մենք ինչ կանեինք:

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Ոսկի մատներ ունի քո ամուսինը, տիկին Սիրան, ոսկի մատներ:

ՍԻՐԱՆ - Հա, մի մատը կտրելու եմ՝ մատանի սարքեմ ինձ համար: Եկավ ինձ ուզելու, մի նշանի մատանի էլ չբերեց:

ՎԱՀՐԱՄ - *(Տպտում է)* Կար՝ չբերեցի՞, այ կնիկ...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Մեր գյուտը Մոսկվա են ուղարկելու: Բոլոր այն գործարանները, որտեղ ականներ են պատրաստում: Ականների արտադրությունը էական չափով կավելանա...

ՎԱՀՐԱՄ - Է, ես ասում եմ պատերազմը շուտ վերջանա, դու ականներն ավելացնելու մասին ես մտածում, ընկեր Վարդանյան...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Որ շատ լինի, շուտ կավարտվի, ուստա Վահրամ: Իսկ ավելցուկի մասին մի մտածի, զենք է, էլի, մի օր պետք կգա:

ՍԻՐԱՆ - Աստված չանի, աստված հեռու տանի, բա դա ասելո՞ւ բան էր, ընկեր Վարդանյան...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Ի դեպ, ավելցուկի մասին: *(Գրպանից թղթադրամներ է հանում)*: Այս հազար ռուբլին էլ իմ կողմից ձեզ:

ՎԱՀՐԱՄ - Ինչի՞ համար...

ՍԻՐԱՆ - Վահրամ...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Քո ընտանիքը մեծ է, ուստա Վահրամ, և հոգսերդ էլ են մեծ: Ես հո գիտեմ: Իսկ մենք ինչ՝ ես ու կինս ենք և երկուսս էլ բարձր աշխատավարձ ենք ստանում: Վերցրու, բարեկամս, վերցրու.

ՎԱՀՐԱՄ - Ավետիք Իսայիչ, ինչի՞ եք պարտքի տակ գցում, առանց էն էլ մենք հոգով և մարմնով պարտք ենք ձեզ, ձեր արած հազար ու մի լավության համար և, ոնց չասեմ, էլի, Յոլակի համար...

ՄԻՐԱՆ - Վահրամ ջան, ընկեր Վարդանյանի խաթրը մի կոտրի, չե՞ս տեսնում՝ մարդն անկեղծ սրտով է տալիս: Հաշվիր, որ Թելմանի շքանշանի մաղարիչն է...

ՎԱՀՐԱՄ – Վայ, ոնց էի մոռացել, աչքդ լույս, ընկեր Վարդանյան, իմ արև, շատ, շատ ուրախացանք, ոնց որ մեր երեխաների համար: Դե Թելմանն էլ մեր երեխան է, էլի...

ՄԻՐԱՆ - Աչքդ լույս, ընկեր Վարդանյան, բարով-խերով ետ գա:

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Այո, այո, շնորհակալություն... Շատ ճիշտ նկատեցիր, ուստա Վահրամ... իհարկե... ձեր տղան է... ըստ որում՝ պատերազմն ավարտվեց թե չէ՝ մի բան եմ պատմելու... էսպես, սրտիս վրա ծանրացած մի բան...

ՄԻՐԱՆ - Վերցրու, այ մարդ...

ՎԱՀՐԱՄ - Իհարկե, որ տանես տաս գրքացներին...

ՄԻՐԱՆ - Ախր մեկ-մեկ էնպիսի ճիշտ բաներ են ասում, Վահրամ ջան...

ՎԱՀՐԱՄ - Հա, իհարկե, եթե Հայրոն է տեղ հասցնողը:

*(Ներս է ընկնում Սաթիկը: Ճշում է:)*

ՍԱԹԻԿ - Մաղարիչ, մաղարիչ, Սիրան մորքուր... մաղարիչ, Վահրամ քեռի...

*(Ետ-ետ նայելով, շտապելով)*

ՄԻՐԱՆ - *(Բռնում է սիրտը)* Նամակ է՞ ... Մելիքի՞ ց...

ՍԱԹԻԿ - Մաղարիչ, մաղարիչ...

ՎԱՀՐԱՄ - Սաթիկ ջան...

ՄԻՐԱՆ - Ինձնից մի ծաղկավոր շորացու...

ՍԱԹԻԿ - Ուշադրություն... ներս է մտնում ձեր հերոս որդին՝ Յոլակ Սամվելյանը...

*(Դռան մեջ հայտնվում է Յոլակը: Նա զինվորական ամառային հագուստով է և պիլոտկայով: Կրծքին փակցված է մի կողմում «Կարմիր աստղը», մյուս կողմում՝ մի քանի մեդալներ: Ուսադիրները ավագ սերժանտի են: Նա ձեռքին փայտ ունի: Իսկ թիկունքից երևում է Տիգրանի երջանիկ դեմքը: Յոլակի ուսապարկը Տիգրանի ուսին է: Տիգրանի թիկունքից*

*իրար ետևից հայտնվում են Նազիկը, Լիզան, տիկին Բերսաբեն: Միրանը ճչում, գրկում է որդուն՝ մոռացած աշխարհը):*

ՄԻՐԱՆ - Բալես, բալես, բալես...

ՅՈՒՆԱԿ - Մամ ջան, կամաց, մամ...

ՎԱՀՐԱՄ - Այ աղջի, թող ես էլ պաչեմ...

ՄԻՐԱՆ - Վայ, քոռանամ ես, վիրավո՞ր ես, մեռնեմ քեզ.

ՅՈՒՆԱԿ - Մի քիչ կծել են, մամ: *(Ազատվում է մոր գրկից: Գրկում է հորը)*

Ո՞նց ես, հայրիկ ջան, ամենաշատը քեզ էի կարոտել:

ՎԱՀՐԱՄ - *(Ուզում է տղամարդավարի պահել իրեն)* Լավ եմ, քեզ մատաղ...

*(ու հանկարծ փղձկում է)* Մեղիքին էլ հետո բերեիր, էլի...

ՄԻՐԱՆ - Ոտքդ է՞, ցավդ տանեմ... Մի թող տեսնեմ...

ՅՈՒՆԱԿ - Հետո, հետո մամ...

ՄԻՐԱՆ - Հետո էլ ասում են՝ մի հավատա: Ես քո ոտքի հողն եմ, մայր աստվածածին...

ՅՈՒՆԱԿ - *(Արդեն նստել է թախտին)* Ախպե՞րս ինչ եղավ, մի արի տեսնեմ, էդ ինչ մեծացել ես, այ տղա... *(Կռացնում, համբուրում է Տիգրանի գլուխը)* Քեզ համար մի լավ սպայական պայուսակ եմ բերել, գրքերդ մեջը կդնես...

ՏԻԳՐԱՆ - Յոլակ ջան, դու էլ կարմիր աստղ ունե՞ս...

ՄԻՐԱՆ - Յոլակ ջան, է՞ս ինչ հրաշք էր, բա ինչի՞ իմաց չտվիր, կգայինք առոք-փառոք կղիմավորեինք, էլ ի, բալա ջան...

ՆԱԶԻԿ - Դե բավական է, Յոլակը հո մենակ ձերը չի, թողեք մի ես էլ պաչեմ... Բարով ես եկել, ախպեր ջան...

ԼԻԶԱ - *(Մեկնում է ձեռքը)* Ոնց ես մեծացել, իսկական հերոս ես, բրատոկ: Էս ինչքան օրդեններ ունես...

ՅՈՒՆԱԿ - Էս մեկը հենց քո Ռոստովի համար եմ ստացել, Լիզա ջան... Կարող ես հանգիստ ետ գնալ...

ԼԻԶԱ - Ո՞ւր գնամ, բրատ ջան, հիմա ես ինչ ունեմ էստեղ է... *(Լաց է լինում)* ինչ որ ունեմ...

ԲԵՐՍԱԲԵ - Տղա ջան, պատահաբար իմ Ալբերտին չե՞ս հանդիպել, չե՞ս տեսել...

ՅՈՒԱԿ - Չեմ տեսել, տիկին Բերսաբե...

ԲԵՐՍԱԲԵ - Նրա մասին չես էլ լսե՞լ, գուցե թե մեկն ու մեկը ասել է...

ՅՈՒԱԿ - Չէ, չեմ իսաբի, տիկին Բերսաբե...

ԲԵՐՍԱԲԵ - Չէ, իհարկե, ինչո՞ւ իսաբես, ուղղակի լսել եմ, որ ռազմաճակատում այնքան անակնկալներ են լինում...

ՆԱԶԻԿ - Յուակ...

ՅՈՒԱԿ - Չէ, Նազիկ մորքուր, Անդրանիկ քեռուն էլ չեմ տեսել:

ՆԱԶԻԿ - Այ ցավդ տանեմ, ես քեզ բա՞ն հարցրի, նրան գտնե՞լ կլինի: Անդրանիկին ես Երևանում էլ մեկ-մեկ էի գտնում:

ՍԻՐԱՆ - Վայ, սատկես դու Նազիկ, սատկես...

ՎԱՀՐԱՍ - *(Վարդանյանին, որն այս ամբողջ իրարանցման մեջ կանգնած է անկյունում և բարեհամբույր ժպտալով Յուակին է նայում)* Տեսնո՞ւմ ես, ընկեր Վարդանյան, Յուակս էլ «Կարմիր աստղ» ունի...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Այո, այո...

ՎԱՀՐԱՍ - Յուակ, տղա ջան, ընկեր Վարդանյանին չտեսա՞ր...

ՅՈՒԱԿ - Տեսա...

ՎԱՀՐԱՍ - Բա ինչի մի կարգին չես բարևում... Հայերենդ մոռացե՞լ ես:

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Լրիվ հասկանալի է, ուստա Վահրամ, զինվորը վիրավոր է, հոգնած, տպավորություններն իրար են խառնվել, նրան հիմա հանգստանալ է պետք, մի կուշտ քնել: Այդպես չէ՞, Յուակ: Իսկ հետո կգամ, կամ գուցե դու կգաս մեր տուն, տղաս, խոսենք մանրամասն...

ՍԻՐԱՆ - Վերևն աստված կա, բալա ջան, ընկեր Վարդանյանը հենց էսօր, ոնց որ հատուկ քո պատվերով մեզ համար *(նայում է հարևաններին, ձայնը ցածրացնելով)* իշխան ձուկ է բերել: Ինչ անեմ, շատ չլինեք, որ բոլորին էլ ասեի... Էհ... Այ բալա քե՞զ ինչ է պատահել... Շա՞տ է ցավում, հա՞, քոռանամ ես...

ՆԱԶԻԿ - Դե կնանիք, մենք գնանք, չխանգարենք, թող հանգստանա Յուակը:

ԲԵՐՍԱԲԵ - Այո, այո...

ԼԻԶԱ - Բայց իրիկունը գալու ենք, հա... լոտոն պատրաստի, Սիրան...

ՍԻՐԱՆ - Համեցեք, համեցեք, մենակ լոտոն չի լինի, ուրիշ բաներ էլ կլինեն, էսօր բոլոր հոգապահուստներս բաց եմ անելու: Էլ ո՞ւմ համար եմ պահելու: Սրանից էլ լավ օ՞ր...  
(Կանայք հեռանում են, Վարդանյանը հագում է)

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Դե ես էլ հեռանամ: Շնորհակալություն: Շատ ուրախ եմ ձեզ համար:

ՍԻՐԱՆ - Վա՞յ, բա ձո՞ւկը:

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Դուք հանգիստ, հարազատներով կերեք, տիկին Սիրան: Ասում էիք, որ Ցոլակը...

ՑՈԼԱԿ - Ես ձուկ չեմ սիրում:

ՍԻՐԱՆ - Դո՞ւ...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Մայրդ էր ասում, Ցոլակ, ասում էր առաջ...

ՑՈԼԱԿ - Ճիշտ է, ճիշտ է, առաջ սիրում էի: Առաջ ես շատ բան էի սիրում, Ավետիք Իսայիչ:  
(Բարձրանում է տեղից) Կամ գուցե հայրիկ ասեմ, հա՞: Առաջ ես ամեն ինչ սիրում էի և ամենքին էի սիրում: Բոլորին, ամբողջ աշխարհը: Իսկ հիմա բաներ կան, որոնցից նողկում եմ և մարդիկ կան, որոնց ես... ոնց որ ֆաշիստներին...

(Ձեռնափայտը նրա ձեռքին դողում է: Ցոլակը գունատվել է սաստիկ)

ՎԱՀՐԱՄ - Սպասիր, սպասիր... Սա էս ինչե՞ր է ասում... Քեզ ի՞նչ պատահեց, այ տղա: Ուշքի արի, Ցոլակ ջան, երևի տաքության մեջ ես, չես հասկանում, թե ինչեր ես խոսում: Ում հետ ես խոսում: Ընկեր Վարդանյանը մեր ընտանիքի պահապան հրեշտակն է...

ՑՈԼԱԿ - Եթե միայն հրեշ ասեիր, բավական էր...

ՎԱՀՐԱՄ - Լսիր, լակոտ, չեմ նայի որ...

ՍԻՐԱՆ - Վահրամ...

ՎԱՀՐԱՄ - Բա էս ինչե՞ր է դուրս տալիս: Դու գիտե՞ս, որ մենք ընկեր Վարդանյանի շնորհիվ է, որ ապրում ենք: Եթե նա չօգներ, իմ ո՞ր գյուտը տեղ կհասներ: Եթե նա չլիներ, դու որտեղ կլինեիր, դու մոռացել է աս, որ դողում էիր թրջված կատվի ձագի նման: Ուրացող: Մոռացել է աս, որ նա փրկեց քեզ բանտից ու բանակ ուղարկեց...

ՑՈԼԱԿ - Իհարկե, իր քնքուշ տղայի փոխարեն...

ՎԱՀՐԱՄ - Ի՞նչ, ի՞նչ...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Ուստա Վահրամ...

ՅՈՒՄԱԿ - Իր Թելմանի փոխարեն, իր... Ուզում էիր խփել, հա՞, հայրիկ ջան, խփիր, խփիր, դու իրավունք ունես, որովհետև ես խաբել եմ քեզ, որովհետև կարծել ես, թե քո տղան է եղել բանակում: Այնինչ երկու և կես տարի, ձմեռվա բուքին ու ամառվա շոգին խրամատում կծկվել, կրակի տակ է ընկել, փորսոդ է տվել ու վիրավորվել, շքանշան ու մեդալներ է ստացել ոչ թե քո տղան, այլ նրա, նրա տղան՝ Թելման Վարդանյանը: Ես Ցոլակը չեմ, դու խառնում ես, հայրիկ...

ՄԻՐԱՆ - Վայ քոռանամ ես, գժվել է բալես...

ՅՈՒՄԱԿ - Ես Ցոլակը չեմ, ես Թելմանն եմ... Թելման Ավետիքի Վարդանյանը

*(Շրջվում է դեպի Վարդանյանը)* Գուցե դուք բացատրեք, որ հասկանան, հայրիկ...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Ես կարծում եմ, որ ամեն ինչ էլ կարելի է բացատրել առանց հիստերիայի, Ցոլակ : Ես արդեն պատրաստվում էի ամեն ինչ պատմել ուստա Վահրամին և նույնիսկ ակնարկներ արեցի: Ճիշտ են ասում, որ ոչ մի լավություն այս աշխարհում անպատիժ չի մնում: Ուստա Վահրամ, դուք չէի՞ք խնդրում, որ բանակ ուղարկեմ Ցոլակին:

ՎԱՀՐԱՄ - Հա, իհարկե... բայց եղ...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Տիկին Սիրան, դուք չէի՞ք փորձում համբուրել իմ ձեռքը, միայն թե բանակ ուղարկեմ Ցոլակին:

ՄԻՐԱՆ - Հա, բայց ինչի՞ քո տղի տեղը...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Որովհետև ուրիշ ելք չկար, տիկին Սիրան: Որովհետև, ուստա Վահրամ, Ցոլակը տասնյոթ տարեկան էլ չկար և ոչ մեկը բանակ չէր ընդունի նրան: Դա դուք ինձանից լավ գիտեք: Ու քանի որ Թելմանը ծանուցագիր էր ստացել, ու քանի որ ես խոսք էի տվել ձեզ, Թելմանի փոխարեն Ցոլակին ուղարկեցինք բանակ: Ու հենց Ցոլակն էր խնդրում, աղաչում, որ Թելմանի անունով ինքը գնա: Ահա ամբողջ գաղտնիքը: Հիմա ո՞րն է իմ մեղքը: Որ փրկե՞լ եմ նրան:

ՎԱՀՐԱՄ - Ես արդեն ոչ մի բան չեմ հասկանում, ոչ մի բան չեմ հասկանում:

ՅՈՒՄԱԿ - Ինչի՞ց ես փրկել, բարերար...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Կալանքից...

ՅՈՒՄԱԿ - Եվ ինչի՞ հիման վրա էին կալանավորելու ինձ...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Հարուցված քրեական գործի...



ՅՈՒՆԱԿ - Ախ, ինչքան հեշտ էր ճակատում, գիտեիր, որ դիմացինդ թշնամի է, միայն և միայն թշնամի և վերջ: Բա մեր, մեր միջի թշնամուն ոնց ճանաչես ախր: Նամանավանդ որ էդ թշնամին, հայրիկ ջան, զալստուկ է կապում...

*(Գրպանից ծրարներ է հանում, մեկնում Վարդանյանին)*

Քրեական գործ էր հարուցված, հա՞ ... բա սրա՞նք ինչեր են, ընկեր Վարդանյան, սրա՞նք ինչեր են:

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Ես ի՞նչ գիտեմ ինչեր են...

ՅՈՒՆԱԿ - Սա, ընկեր Վարդանյան, կապիտան Սեդրակյանի նամակն է, որտեղ ամեն ինչ պատմել է ինձ՝ կամավոր բանակ գնալուց առաջ: Թե ինչպես էք հորինել այս պատմությունը: Եվ սա էլ պաշտոնական տեղեկանք է միլիցիայի բաժնից, որ իմ դեմ ոչ մի քրեական գործ էլ հարուցված չի եղել և չկա: Որովհետև բողոքը չի եղել... ընկեր Վարդանյան:

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Բայց հենց իմ խնդրանքով է, որ չի եղել այդ բողոքը...

ՅՈՒՆԱԿ - Ես այնքան էի վառվել ձեր ձեռքից, որ փոխանակ առաջինը մեր տուն մտնեմ, Արշակ աղբարի տուն մտա: Եվ Արշակ աղբարը քիչ մնաց լաց լինի: Ասաց, որ մտքով էլ չի անցել բողոքել իմ մասին: Ասաց, որ ինքը այդ անիծված ծխախոտը հենց վիրավորների համար էր կտրել, պատրաստել, որ բաժանի նրանց: Ասաց, որ նախ ինքը ծխող չի, և հետո ասաց, բա ես իմ հարևանի տղային բանտ կուղարկեի՞ մի բուռ թուրթունի համար...

Այնպես որ այս ամբողջ պատմության մեջ միակ ստորը դուք էք, և լավ է, որ միակ ստորը դուք էք:

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Դե գիտեք ինչ, հիմա հեշտ է ետին թվով...

ՎԱՀՐԱՄ - Բա դու, դու, տղա ջան, մինչև հիմա ո՞նց ես ապրում ուրիշի անունով: Դու...

ՅՈՒՆԱԿ - Ես արդեն ուրիշի անունով չեմ, հայրիկ: Հոսպիտալում ժամանակ ունեի մտածելու և գրելու: Ամեն ինչ մանրամասն գրեցի պաշտպանության մինիստրին, ուղարկեցի բոլոր տեղեկանքներն ու փաստաթղթերը: Եվ ինձ ներեցին: Ու նույնիսկ տասնհինգ օր արձակուրդ տվեցին, որպեսզի տուն գամ և զինկոմիսարիատում վերաձևակերպեմ ամեն ինչ: Ես հիմա Յոլակ Վահրամի Սամվելյանն եմ, հայրիկ: Իսկ թե ի՞նչ կլինի իմ անունը գողացողի ու նրա հոր հետ, կներես, բայց ինձ չի հետաքրքրում:

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Ի՞նչ պետք է լինի: Փաստորեն քո տեղը նա նստեց, էլի: Խեղճ տղաս մոր հետ երեք տարի է կծկվել էր գյուղում, ուրիշի անունով, թոքախտ է ընկել վախից... Այնպես որ՝ ուզենան էլ չեն տանի:

ՎԱՀՐԱՄ - Գնա մեր տնից, Ավետիք Իսայիչ...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Ի՞նչ... Գնում եմ: Գնում եմ: Դուք, իհարկե, իրավունք ունեք: Բայց ինչ էլ ասեք, չեք կարող ավելի շատ ու ավելի խորը վիրավորել ու խոցել ինձ, որքան ես... որքան ես եմ դատապարտել ինձ ու դատապարտում...

Ետ նայեք, ետ նայեք այս վերջին տարիներին ու հիշեք՝ ես ինչպես էի ձեր տուն մտնում: Հիշեք, հիշեք, խնդրում եմ, մի՞ թե ես ապաշխարողի նման չեի: Հիշեք, ամեն անգամ ձեր տուն եմ մտել հոգուս ծանրացած մեղքերին թողություն հայցելու համար: Եթե իմանաք ինչքան եմ տանջվել ես...

ՑՈԼԱԿ - Ինչ էք ասում...

ՎԱՀՐԱՄ - Թող խոսի, տղաս...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Վերջերս մի տեղ կարդացի, որ Հայրենական մեծ պատերազմը ահեղ քննություն ու մեծ փորձություն է աշխարհի ժողովուրդների համար: Ու անմիջապես մտածեցի, որ նաև մարդկանց համար, առանձին-առանձին մարդկանց համար ու ինձ համար: Եվ սարսափով համոզվեցի, որ ես չեմ դիմացել այդ փորձությանը: Բոլորը-բոլորը իմ շրջապատում, իմ հարևանները, իմ ընկերները դիմացել են, իսկ ես չէ: Ես կտրվել եմ քննությունից: Հա, հա... Ախր երբ պատահեց չարաբաստիկ դեպքը և Թելմանն էլ ծանուցագիր ստացավ, ինձ թվաց, թե այդ թուղթը ճակատագիրն է ուղարկել երկուսին էլ փրկելու համար: Ցուրակը բանակ կգնա, մտածում էի ես, իսկ իմ Թելմանն էլ մի տարի ժամանակ կշահի: Իսկ այդ մի տարում գուցե և ավարտվի պատերազմը: Այդպես էի մտածում: Թեև դա ավելի շատ բնագոյ էր, սեփական երեխային վտանգից հեռու պահելու բնագոյ, որ նույնիսկ գազաններն ունեն...

ՍԻՐԱՆ - Ուրիշները երեխաներ չունեն...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Իմը մեկն էր, տիկին Սիրան, միակը, տասը տարի սպասել էինք: Ու ինձ միշտ թվում էր, թե եթե ամուր չպահեմ գրկիս մեջ՝ կորցնելու եմ: Մի անգամ իջել էինք Ջանգվի ձորը՝ ձուկ բռնելու: Ես գցել էի կարթը, իսկ ինքն էլ նստել էր կողքիս ու փոքրիկ, փոքրիկ քարեր էր նետում գետի մեջ: Կարթս ցնցվեց, ես վեր թռա ուրախությունից ու սկսեցի ձգել թելը: Զգացի, որ Թելմանը շատ է առաջ թեքվել, բայց հետն էլ մտածում էի, թե կհասցնեմ, կհանեմ ձուկն ու կբռնեմ իմ տղային: Հանեցի ձուկն ու մեկ էլ տեսա, որ գետն է ընկնում որդիս: Չորս տարեկան էր, գիտեք... Գլխին սպիտակ բուրդոնով կա ուներ՝ մեծ կարմիր աստղով...

Ես նետվեցի նրա ետևից, բայց ինչ անում էի, չեի կարողանում հասնել: Ալիքները թեթև-թեթև տանում էին նրան՝ խփելով քարերին, իմ աչքի առաջ, հասկանո՞ւմ եք, իմ աչքի առաջ: Ու ես չեի կարողանում հասնել...

ՍԻՐԱՆ - Վախ, վախ, վախ... մարդ կգժվի...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Ու այդ օրվանից ներսումս ինչ-որ բան կտրվեց, խառնվեց իրար: Օրեր, շաբաթներ, տարիներ շարունակ ինձ թվում էր, թե տղաս թռչելու է, ընկնելու է ձեռքիցս և ես չեմ կարողանալու հասնել նրան: Ես աշխատում էի ամուր պահել նրան իմ

գրկում, ամուր, ամուր ու երևի շատ ամուր էի սեղմում, որովհետև իմ գրկի մեջ էլ խեղդեցի նրան: Չէի ուզում ասել, բայց հիմա, հենց հիմա հիվանդանոցում պատկած իմ աչքի առաջ ձեռքիցս գնում է տղաս ու ես չեմ կարողանում օգնության հասնել նրան, չեմ կարողանում:

ՅՈՒՆԱԿ - Ո՞վ է մեղավորը, ո՞վ...

ՎԱՀՐԱՄ - Ցոլակ...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Ես... Ու դրա համար էլ պատժված եմ: Ներեցեք ինձ, եթե կարող եք, մեծահոգի եղեք ու ներեցեք ինձ...

ՏԻԳՐԱՆ - Ներենք, բա ո՞նց...

ՎԱՐԴԱՆՅԱՆ - Հիմա էլ որ հիշում եմ, թե ինչպես էին այիքները տանում նրան... խփում քարերին...

ՎԱՀՐԱՄ - *(Խեթ հայացքով Տիգրանին նայելով)* Գնա, Ավետիք Իսայիչ, գնա, ի՞նչ ասեմ...

*(Վարդանյանը գլխիկոր դուրս է գալիս)*

ՄԻԲԱՆ - Թող աստված առողջություն տա քո... *(Բնքն իր հետ կովելով)*

Երեխան ի՞նչ մեղք ունի, է... Թող աստված հենց իրեն պատժի... *(Տղաները փոթկացնում են)*

ՏԻԳՐԱՆ - Վախ մամա ջան, քեզանից դատախազ դուրս չի գա...

ՄԻԲԱՆ - Բա ի՞նչ անեմ, է, մարդ են, մեղք են, էլի... *(Լաց է լինում)*

ՅՈՒՆԱԿ - Վայ, հազիվ հոգիս խաղաղվեց... Դե շուտ արա, մամ, էդ ձուկը բեր ուտեմ, դրա հերն էլ անիծած... Սոված մեռնում եմ:

ՎԱՀՐԱՄ - Ներող եղիր, տղա ջան, որ ձեռք բարձրացրի... Ներող եղիր, ցավդ տանեմ... Աղջի, սոված է տղես, արի գնանք տեսնենք ինչ ենք անում...

*(Մոտենում է Տիգրանը)*

ՏԻԳՐԱՆ - Վայ, ախպեր ջան, վայ, ինչքան ես տանջվել, ախպեր ջան... Ու ո՞նց ես փոխվել, առաջ լինեի, հիմա էդ ձեռքիդ փայտը ջարդել էիր ընկեր Վարդանյանի գլխին...

ՅՈՒՆԱԿ - Անցավ, ամեն ինչ անցավ...

ՏԻԳՐԱՆ - Ցոլակ ջան, ախր չասացիր, թե Կարմիր աստղն ինչի համար ես ստացել:

ՅՈՒՆԱԿ - Լավ սողալու համար, ախպերս, ճարպիկ սողալու համար...

ՏԻԳՐԱՆ - Դե լավ, է...

ՅՈՒՆԱԿ - Ճիշտ եմ ասում, Տիգրան ջան: Կերչում ուղիղ երեք ամիս կծկվել մնացել էինք խրամատներում, չէինք կարողանում գլուխ բարձրացնել: Հենց մեկն ու մեկս գլուխը բարձրացնում էր, իսկույն կրակում էին շան որդիները: Փամփուշտ շատ ունեին, կրակում էին: Այնպես էինք զգվել, որ ուզում էինք թքել ամեն ինչի վրա, կանգնել, ձգվել հասակով մեկ, ձգվել ու հետո թեկուզ սպանեին: Դու գիտես ինչ բախտավորություն է բոյով մեկ հանգիստ կանգնելը, ախպեր ջան:

ՏԻԳՐԱՆ - Բա շքանշանը...

ՅՈՒՆԱԿ - Դե ուրեմն էնքան էի զգվել կուչ գալուց, որ մի օր հրամանատարին ասացի. թող գնամ «Լեզու» բերեմ: Գնա, ասաց: Ուշ գիշերին սողալով-սողալով փշալարերի տակով անցա: Գերմանացիները ընդամենը մի տասը մետրի վրա էին: Մի խոսքով սողացի, սողացի, տեսնեմ դրանցից մեկը գլուխը գնդացրի կողքին դրած մուշ-մուշ քնած է: Ձեռքիս կացնի բութ մասով դրան ավելի խորը քնեցրի ու էլի սողալով, սողալով բերեցի մերոնց մոտ: Էդքան բան:

ՏԻԳՐԱՆ - Վայ, ես քո ցավը տանեմ, Յուլակ, բա չէի՞ր վախենում:

ՅՈՒՆԱԿ - Էդ բոլորը վախից արեցի, ախպեր ջան...

ՏԻԳՐԱՆ - *(ծիծաղում է)* Լավ էլի...

ՅՈՒՆԱԿ - Տիգրան:

ՏԻԳՐԱՆ - Հը:

ՅՈՒՆԱԿ - Մարոն ինչ է անում:

ՏԻԳՐԱՆ - *(թոթվում է ուսերը)* Եսիմ...

ՅՈՒՆԱԿ - Երկար ժամանակ նամակ չի գրում ինձ... Ականջովս ընկավ, որ ամուսնացել է: Ճի՞շտ է:

ՏԻԳՐԱՆ - Ճիշտ է, Յուլակ ջան:

ՅՈՒՆԱԿ - Իսկ Մելիքը գիտի՞, իմացե՞լ է:

ՏԻԳՐԱՆ - Չէ:

ՅՈՒՆԱԿ - Հիմար, հիմար աղջիկ: Բա որ Մելիքն իմանա:

ՏԻԳՐԱՆ - *(Փղձկում է)* Չի իմանա...

ՑՈԼԱԿ - Ի՞նչ պատահեց քեզ:

ՏԻԳՐԱՆ - Մեկիքն էլ ոչինչ չի իմանա, ախպեր ջան: Միրտս պայթում է: Թե ոնց եմ դիմացել, որ չասեմ... Մամային, հայրիկին բան չասես, մեղք են, բայց Մեկիքը չկա, զոհվել է: Սն թուղթը Մարոն է ստացել անցյալ տարվա փետրվարին...

ՑՈԼԱԿ - *(Փորձում է բարձրանալ, չի կարողանում, ընկնում է)* Էդ ինչեր ես ասում, Տիգրան, մեր Մեկիքը...

ՏԻԳՐԱՆ - Հա, Ցոլակ ջան... Հիմա ես ու դու ենք մնացել, ախպեր ջան ու Մեկիքի տեղն էլ պիտի սիրենք ու պահենք մեր են ծնողներին: Ես ու դու:

ՑՈԼԱԿ - *(Մի պահ ցավից փակել է աչքերը: Գոռում է)* Ես, ես, ես... գնալու եմ նորից ու ոչ մեկին չեմ խնայելու, ոչ մեկին, իժի ծնունդներ, ոչ մեկին...

ՏԻԳՐԱՆ - Կամաց, ցավդ տանեմ, մեղք են մաման ու հայրիկը... Ցոլակ ջան:

ՊԱՏԿԵՐ ԻՆՆԵՐՈՐԴ

*(Շենքի տանիքը: Լիզան երկաթե տակառից ջուր է վերցնում, ավելով ցայում հողե հատակին : Զգացվում է, որ հողի է: Ինչ-որ ռուսական ծորուն, կարոտած երգ է երգում: Բացվածքից հայտնվում է Նազիկը, կանգ, է առնում, լսում է ժպտալով):*

ՆԱԶԻԿ - Այ աղջի, որ էդ տեսակ ձայն ունես, մինչև հիմա ինչի՞ չէիր երգում:

ԼԻԶԱ - Է, Նազիկ ջան, սիրտ չկա... դու ինձ տեսնեիր, թե ոնց էի երգում էն ժամանակ, այնտեղ, մեր Ռոստոփչինայում... առաստաղը զնգում էր:

ՆԱԶԻԿ - Պահ, մեռածի հայերենը... առաստաղ... մենք պատալով ենք ասում, սա ասում է՝ առաստաղ...

ԼԻԶԱ - Հայերեն սովորեք:

ՆԱԶԻԿ - Վա՞յ, բա էդ ջո՞ւրն ինչ ես անում, դա... ո՞նց են ասում՝ հա ստրատեգիական ջուր է, պաշտպանական նպատակներով... Բա որ հանկարծ հիմա մի «Մեսսերշմիդտ» գա ու ռումբ գցի, ինչով պիտի հրդեհը հանգցնենք:

ԼԻԶԱ - Բերանդ բարով բաց արա, այ Նազիկ:

ՆԱԶԻԿ - Լավ պրծանք: Բայց հանաքը մի կողմ, Լիզա, էսքան տարի հերթապահեցինք էս տանիքի վրա, գոնե օրինակի համար մի ռումբ չգցեցին, որ տեսնեինք, թե ինչ բան է... Ուրեմն մեր էսքան տարվա աշխատանք հե՞ջ..

ԼԻԶԱ – Էիս, ես դա հանաքով էլ չէի ասի, քույրիկ, մի գիշեր չկա, որ հանկարծ վեր չթռչեմ վախից... Ամեն անգամ ոնց որ թե մեկը հրի...

ՆԱԶԻԿ – Հայրոն կլինի, Հայրոն... Գիտենք ինչ պտուղ է...

ԼԻԶԱ - *(նախատինքով)* Նազիկ... Իսկ ռումբերը... Իսկ մեր հերթապահությունը կփակեն, քույրիկ ջան... դու դրոշակներին նայիր, դրոշակներին, տես որտեղ են հասել... Հո դիմացանք, հո հասանք մեր նպատակին... Հիմա գերմանացի կանայք թող հերթապահ կանգնեն իրենց տանիքներում: Գետինը մտնեն նրանք...

ՆԱԶԻԿ – Է, կինը տանիքում ի՞նչ գործ ունի, է, հայ լինի, ռուս լինի, թե գերմանացի... Կնկա տեղը, Լիզա ջան, խոհանոցն է... ու մեկ էլ դու ինձանից լավ գիտես, թե որտեղ...

ԼԻԶԱ - Նազիկ, բայց դու անամոթ ես, գիտե՞ս...

ՆԱԶԻԿ - Իհարկե, Լիզա ջան, բայց որ Անդրանիկը գա, ես էլ կխելոքանամ, կհանդարտվեմ, կկոտրատվեմ քեզ նման: Oh, oh, oh... կակայա սկրոմնայա...

*(Լիզան չի դիմանում, ծիծաղում է)*

Վայ, լեզուդ չորանա, էն ի՞նչ ինքնաթիռ է, այ աղջի... ոնց որ...

ԼԻԶԱ - Մերն է, մերը...

ՆԱԶԻԿ - Ճի՞շտ... Սիրտս փոքս ընկավ... Այսինքն ճիշտը որ ասենք՝ տիկին Բերսաբեի ահից ինքնաթի՞ռ կերևա մեր քաղաքում...

ԼԻԶԱ - Ի՞նչ ես ուզում տիկին Բերսաբեից, այ Նազիկ...

ՆԱԶԻԿ - Լիզա ջան, թե սուտ եմ ասում, գետինը մտնեմ: Դա մարդուց կախված չի: Երեսի հարց է: Բոլորս էլ գիտենք, որ բարի ու խեղճ կին է, չէ՞ տիկին Բերսաբեն: Բայց, մեկ է, ով երեսը տեսնում է, գործերը ձախ են գնում: Բոլոր հարևաններն էլ փորձել են. երկու անգամ հենց ուստա Վահրամի ոտքն է շուռ եկել սառույցի վրա: Սիրանը քանի անգամ հացի է գնացել, խանութը փակ է եղել: Երեխաներից ով նրան տեսել է՝ կտրվել է քնությունից: Շուշիկը շուկայից մի անգամ ճագար է առել, ճանապարհին հանդիպել է տիկին Բերսաբեին՝ եկել է տուն ու տեսել ոչ թե ճագար է, այլ քերթած կատու:

ԼԻԶԱ - Օյ, նե մոզու... օյ, նե մոզու...

ՆԱԶԻԿ - Ռուսերենդ հիշեցի՞ր: Հավատա, որ էսքան զենք ու զրահի ու զորքի փոխարեն, մերոնք միայն տիկին Բերսաբեին տանեին գերմանացիների դեմ, սրանք սրտապատառ կփախչեին: Հրացանները չէին կրակի, ռումբերը չէին պայթի, հարձակվողների ոտքերը շուռ կգային սառույցի վրա, ամառվա շոգին բենզինը կսառեր տանկերի մեջ, բոլոր լոտչիկներն էլ մի վայրկյանում ցած կընկնեին... Ախպեր, ես երես ասածին հավատում եմ...

ԼԻԶԱ - Լավ, քե՞զ ինչ է արել, այ Նազիկ...

ՆԱԶԻԿ - Ասեմ, հենց էսօր, գժանոցի մոտ սեմուչկա ծախող, տարիքը մոռացած մի մունտառ մորուքավոր բիձա կար, տեսել ես, չե՞...

ԼԻԶԱ - Հետո՞...

ՆԱԶԻԿ - Մի օր խոսքով ընկանք... Մի խոսքով՝ ասաց վերարկուիդ երեք հարյուր ռուբլի փող կտամ: Ինձ էլ փող էր պետք, տեղն ու տեղը հանեցի ու տվեցի: Ասաց մի շաբաթից կգաս՝ փողը կտանես...

ԼԻԶԱ - Նո՞ւ...

ՆԱԶԻԿ - Առավոտյան հենց դուրս եկա... տիկին Բերսաբեն ուղիղ դիմաց... Ուզեցի ետ դառնամ, ասաց «բարի լույս»: Քոռանամ ես, ասացի, փողերս կորան: Գնացի տեսնեմ՝ բիձան չկա: Գիտեի, որ տունը գժանոցի ետևն է, գնացի տեսնեմ՝ ժողովուրդն իրար խառնված, բիձեն էլ առոք փառոք ձեռքերը փորին դրած, մորուքը ցցած, դագաղում պառկած...

ԼԻԶԱ - *(Բռնել է փորը)* Նազիկ... Նազիկ...

ՆԱԶԻԿ - Էլ ի՞նչ Նազիկ, ուզեցի սուս ու փուս ետ դառնամ, բռնեցին թե՛ եթե հարազատ ես, պսակի փող ենք հավաքում, տասը մանեթ տուր...

ԼԻԶԱ - *(Անօգնական շարժում է ձեռքերը)* Գնա, գնա, ասում եմ, ինձ... էսքան ծիծաղել չի կարելի...

ՆԱԶԻԿ - Ինձ էլ լաց լինել չի կարելի, Լիզա ջան, գնալուց առաջ Անդրանիկս արգելել է, երեխաներս երեսիս են նայում... ի՞նչ անեմ...

*(Բացվածքի մեջ հայտնվում է տիկին Բերսաբեի գլուխը, ասում է ցածում գտնվող ինչ-որ մարդկանց)*

ԲԵՐՍԱԲԵ - Բա որ ասում էի այստեղ կլինե՞ս:

ՆԱԶԻԿ - Խնդրեմ, անունը տուր...

ԲԵՐՍԱԲԵ - Բեր, Սաթիկ, զգուշությամբ բարձրացրու, Տիգրան, Սաթիկին մի բռնիր, տորթը բռնիր...

*(Իրար ետևից տանիքում հայտնվում են Սաթիկը, Տիգրանը, Սիրանը, տիկին Բերսաբեի դեմքը փայլում է)*

Այդպես, զգույշ, դիր սեղանին, Տիգրան... Այդպես: Սա բարեկամներ, կոչվում է ամառային տորթ՝ պատրաստված է բազուկից, գազարից, ելակից և կեռասից... իմ ստեղծագործությունն է...

ՆԱԶԻԿ - Ի՞նչ առիթով է, տիկին Բերսաբե...

ԲԵՐՍԱԲԵ - Աչքալուսանք է, իմ սիրելի հարևաններ... Ես այսօր իմ Ալբերտից նամակ ստացա... վերջապես... Ուռուա...

ԲՈՒՆՈՒՆ - *(Անհամերաշխ)* Ուռուա...

ԲԵՐՍԱԲԵ - Հավաքվեք տորթի շուրջը... կտրտում եմ...

ԼԻԶԱ - Օյ, ինչ ուրախություն է, վայ, ինչքան ուրախ եմ ձեզ համար, տիկին Բերսաբե...

ՆԱԶԻԿ - Նամակ, բա...

ՍԱԹԻԿ - *(Շշուկով)* Հին նամակ է, մամ, մի տարով ուշացած...

ՏԻԳՐԱՆ - Սև թուղթը դրանից հետո է եկել... ես տեսա...

ՍԻՐԱՆ - Հրաշք է, էլի, ձեր ցավը տանեմ... Տարոսը մեզ... տարոսը մեզ... Ձեռքդ դիր մեր գլխի վրա, տիկին Բերսաբե:

ՆԱԶԻԿ - *(Քաշում է փեշը)* մի արա... մի արա...

ՍԻՐԱՆ - Ինչի՞, այ աղջի...

ՆԱԶԻԿ - Հին նամակ է, Սիրան...

ՍԻՐԱՆ - Վայ, քոռանամ ես, հիմա ի՞նչ անենք, այ հարամ լիներ էս տեսակ կյանքը...

*(Բոլորը մի տեսակ շփոթված են)*

ԲԵՐՍԱԲԵ - Այս ի՞նչ բան է, ես ուրախ դեմքեր չեմ տեսնում: Ուրախանալը մոռացե՞լ եք, ինչ է ի՞նչ անենք, որ գինի չկա:

ԼԻԶԱ - Վազեմ բերեմ... Հայրոս մի շիշ պահել է...

ՆԱԶԻԿ - Մենք առանց գինու էլ հարբած ենք, տիկին Բերսաբե:

ՍԻՐԱՆ - Սուտ է՞ որ, հարբածի նման հազիվ ենք ոտքի վրա կանգնում...

ԲԵՐՍԱԲԵ - Միևնույն է, բոլորս էլ այսօր պետք է երգենք ու պարենք: Ինձ համար մեծ երջանկություն է, ինձ համար տոն է, իմ Ալբերտն ինձ նամակ է գրել...



ՍԻՐԱՆ - *(Նազիկի)* Ես չեմ դիմանում, ես գնում եմ... սիրտս թուլանում է:

ՆԱԶԻԿ - Ի՞նչ ես անում, ուզում ես գլխի՞ ընկնի, մեղք է, չէ...

ԲԵՐՍԱԲԵ - Ճիշտ է, ուշացած նամակ է, բայց նամակ է: Ես ամենից շատ անցած տարվա համար էի վախենում: Շատ ծանր մարտեր էին: Իսկ հիմա մեր զորքերը գրեթե առանց դիմադրության են առաջ գնում:

*(Յույց է տալիս քարտեզը)*

Տեսեք ուր են հասել... Շատ քիչ բան է մնացել, չէ՞, Տիգրան:

ՏԻԳՐԱՆ - Բան չի մնացել, տիկին Բերսաբե...

ԲԵՐՍԱԲԵ - Տեսնո՞ւմ եք: Դրա համար էլ սիրտս հանգիստ է և ուրախ... Երբ այդքան արագ հարձակվում են, ո՞վ ժամանակ կունենա նամակ գրելու... Ճիշտ չէ՞, Սիրան... Ճիշտ չէ՞, Նազիկ...

ՍԻՐԱՆ - Հա, դե... մերոնք էլ չեն գրում...

ՆԱԶԻԿ - Հա բա ինչ... *(մեկուսի)* Փառք աստծո, փառք աստծո...

ԲԵՐՍԱԲԵ - Եվ ամենահետաքրքիրը որն է, գիտե՞ք, վերջերս մտածեցի, որ թխսկանը բնկալի վրա է ձու դնում: Որ դատարկ տունը մարդու չի ձգի-բերի: Եվ գնացի մանկատուն: Որք երեխաներ են եվակուացրել Ռուսաստանից: Ով ուզում է, կարող է վերցնել, պահել: Ես ընտրեցի... շատ ներողություն այդ խոսքի համար, ուղղակի խնդրեցի, որ ինձ տան պահելու մի աղջնակի ու մի տղայի: Քույր-եղբայր են, գիտե՞ք: Մեկի անունը Սերյոժա է, մեկի անունը՝ Նաստյա: Հրեշտակներ են: Վաղն արդեն տուն եմ բերելու... մեր տուն... Թող տունը ձայներով լցվի... Ալբերտս կլսի, կկարոտի, կգա...

ԼԻԶԱ - *(Հուզմունքից խեղդվելով)* Ես խոնարհվում եմ ձեր առաջ, մամա...

ԲԵՐՍԱԲԵ - Ինչի՞ համար, աղջիկս, ո՞վ չէր անի նույնը...

ՍԻՐԱՆ - Արևիդ մեռնեմ, տիկին Բերսաբե, իրար հետ կպահենք, չմտածես...

ՍԱԹԻԿ - Ես ամեն օր կտանեմ ման կաձեմ կոմայգում...

ՏԻԳՐԱՆ - Պարզ չի՞, որ ես էլ քեզ հետ...

ՆԱԶԻԿ - *(Լաց է լինում)* Դու ինձ ների, տիկին Բերսաբե: Դու ինձ ների, հոգի ջան... Ես մի հիմար ու դառնացած կնիկ եմ... Իսկ դու մեծ... մեծ մարդ ես, դու սուրբ ես... հա...

ԲԵՐՍԱԲԵ - Չեղավ, չեղավ, ոչ մի լաց... Վառեցինք, այսօր միայն ուրախություն: Տիգրան, առանց քեզ չի լինի, սկսիր:

ՏԻԳՐԱՆ - Ե՞ս... ես ի՞նչ ասեմ...

ԲԵՐՍԱԲԵ - Ավագակ... Չե՞մ տեսնում, թե ոնց ես ամեն անգամ խենթ Դալուլեյի տնագն անում: Դե, սկսիր...

ՏԻԳՐԱՆ - Հա, բայց թող բոլորն էլ կրկնեն «Դալուլեյ, Դալուլեյ, Դալուլեյ ջան»:

ԼԻԶԱ – Դավայ...

ՏԻԳՐԱՆ - *(Կերպարանափոխվում է, շրջում է պիջակը, հագնում, քիչ իջեցնում է տաբատը, խառնում է մազերը և մեկ աջ, մեկ ձախ ոտքով դրոփելով, սկսում)*

Հեռացված եմ, մոռացված եմ,

ԲՈԼՈՐԸ - Դալուլե, Դալուլե, Դալուլե ջան...

ՏԻԳՐԱՆ - Ղարիբ դուռ եմ, վարդի փուռ եմ...

ԲՈԼՈՐԸ - Դալուլե, Դալուլե, Դալուլե ջան...

ՏԻԳՐԱՆ - Խնձոր կծեմ, ֆոֆոա...

ԲՈԼՈՐԸ - Դալուլե, Դալուլե, Դալուլե ջան...

ՏԻԳՐԱՆ - Թուշ կծեմ՝ մոմա...

ԲՈԼՈՐԸ - Դալուլե, Դալուլե, Դալուլե ջան...

*(ծափ, ծիծաղ)*

ԼԻԶԱ - Չտո՞ղ գնաչիտ՝ թուշ կծեմ մոմա...

ՆԱԶԻԿ - Դու էդ շատ լավ գիտես, այ աղջիկ... Հրեդ թուշ արդեն կծած է...

ԲԵՐՍԱԲԵ - Հետո՞, հետո՞, Տիգրան...

ՏԻԳՐԱՆ - *(Ուրիշ էրգ է երգում)*

*Մի վիտոդիմ վրպուլե,  
Մի գուլյայեմ վր պուլե  
Պոլ գոլոտա դամ տեբե,  
Տի նե գաբուդեշ մնե...*

*(ծիծաղում են, ծափ են տալիս, խփում Տիգրանի մեջքին)*

ԼԻԶԱ - Դե հերիք է, ես պարելու եմ... երգում ենք «Կալինկա», կորչի տխրությունը...

*(Ծափ են տալիս, երգում, Լիզան պարում է, կրակոտ, ոտքերն ամուր դռփելով)*

ՆԱԶԻԿ - Այ աղջի, էդ ի՞նչ ես անում, մի քիչ կամաց, մեղք է...

ԼԻԶԱ - Ոչ մի կամաց, թող ուրախություն սովորի, լաց շատ է տեսել... Դե արագ ծափ, ծափ...

*(Պարում է ինքնամոռաց: Գլուխ է տալիս: Բոլորը ծափահարում են, ոգևորում են):*

ՆԱԶԻԿ - Սաթիկ, էդ մենք ումի՞ց ենք պակաս... մի հատ «Նազ պար»: Տիգրան՝ դեռ: Սիրան նվագում ենք բերանով...

*(Տիգրանը վերցնում է դուլը, շրջում ու սկսում է խփել: Սաթիկն ու Նազիկը պարում են, մեջ են քաշում Սիրանին ու տիկին Բերսաբեին):*

ՏԻԳՐԱՆ - Անցնում ենք «Քոչարի»... Սկսեցինք... Քոչարի ջան, քոչարի, երկու գնա, մեկ արի...

*(Դուլը ձեռքին առաջ է ընկնում ծամածովելով: Նրա ետևից իրար գրկած պարում են բոլորը՝ Նազիկը, Սիրանը, Սաթիկը, Լիզան, Տիկին Բերսաբեն, դռփում են հատակին ու պարում են: Պարում են ճիշտ-աղաղակով, ծիծաղելով, ծաղրելով իրար):*

ՆԱԶԻԿ - Այ աղջի, ոտքդ մեկ-մեկ էլ գետնին դիր, էլի... անընդհատ մագուլիս վրա ես դնում...

ՍԻԴԱՆ - Ձեզ մատաղ, որ հեռվից մեզ տեսնող լինի, կկարծի թե գժվել ենք:

ՏԻԳՐԱՆ – Կասեն՝ գժանոցի ֆիլիալն է:

ԼԻԶԱ - Ի՞նչ ես բաղի նման օրորվում, այ Նազիկ...

ՆԱԶԻԿ - Հլա սրան տեսեք, Ռուսաստանից եկել, ու ինձ «Քոչարի» է սովորեցնում... Այ աղջի, սա քեզ համար վալս չի է, որ խտտես-պտտես:

ՍԱԹԻԿ - Վայ մեռա, հլա Տիգրանին, կաղ Ենոքի տնագն է անում...

*(Խառնվում են իրար, հրում են, ծիծաղում են, ծիծաղում են հիստերիկորեն, ասես վրեժ լուծելով իրենց ծանր աշխատանքի համար, անուրախ կյանքի, վարագուրած պատուհանների, ձգձգվող պատերազմի, անցնող ջահելության համար: Եվ այդ ծիծաղի մեջ ահավոր տխրություն կա):*

ՍԻԴԱՆ - (Ընկնում է աթոռին) Վայ մեռա... վայ մեռա... (ծիծաղում է ու հանկարծ սկսում է լաց լինել: Բջնում է մի մեծ լռություն)

Բա ես իրավունք ունե՞ի՞ ... բա ես... երդվել էի, որ մինչև տղերքս տուն չգան... Մեղա քեզ, տեր աստված, մեղա քեզ, տեր աստված...

ՆԱԶԻԿ - Կգան, կգան, քույրիկ ջան, մեկ էլ տեսնելու ենք Անդրանիկի հետ թև-թևի տված ներս մտան... Տեսնես ո՞րտեղ է հիմա, ի՞նչ է անում իմ տանջված մարդը... *(Հեծկլտում է)*

ԼԻԶԱ - Պետք չէ, պետք չէ, մի արեք, մի արեք, շատ եմ խնդրում...

*(Ձեռքով փակում է աչքերը)*

ՍԱԹԻԿ - Տիգրան, նորից ձեռքից գնացին, մի բան արա...

ՏԻԳՐԱՆ - Հա, ուշադրություն, նոր ինֆորմացիոն հաղորդագրություն, միլիցիայի կապիտան Անդրեյի աշխատողներից մեկը մեռնում է: Անդրեյը գերեզմանի փոսի վրա կանգնում ու ասում է.

- Քնիր, հանգիստ քնիր, մեր սիրելի ընկեր, դու պոստի վրա էլ էիր քնում...

ՍԱԹԻԿ - Հետո, հետո...

ՏԻԳՐԱՆ - Ամոթ է, Սաթ...

ՍԱԹԻԿ - Ամոթ չի, ամոթ չի... Հենց դադար տաս, լացը նորից սկսելու են:

ՏԻԳՐԱՆ - Լավ: Հետո ասում է՝ հանգիստ քնիր, մեր սիրելի ընկեր, և ընտանիքիդ մասին էլ մի մտածիր: Երեխաներիդ հարազատ պետությունը կպահի... Կնոջդ էլ մի կերպ ես...

*(Ժծադու էն)*

ՍԻՐԱՆ - Ձենդ կտրի, շան լակոտ, հլա սրան տեսեք...

ՆԱԶԻԿ - Հա, էլի, հազիվ մի կարգին միլիցիայի աշխատող կա, վրան ինչ ասես հնարում են...

ՏԻԳՐԱՆ - *(Մաթիկին)* Էս էիր ուզո՞ւմ...

ՍԱԹԻԿ - Հա, Տիգրան ջան, ինչ ուզում են խոսեն, միայն թե լաց չլինեն: Էլ չեմ դիմանում:

ԲԵՐՍԱԲԵ - Շատ-շատ շնորհակալ եմ ձեզ, իմ բարի, իմ լավ հարևաններ, որ մասնակցեցիք իմ մեծ ուրախությանը: Թող բոլորիդ տներում ուրախություն լինի: Հանկարծ գիտե՞ք ինչ մտածեցի, թե մեզանից յուրաքանչյուրը ինչպես է ապրելու պատերազմից հետո... Հետաքրքիր է, չէ՞ ... Պատերազմից հետո...

ՆԱԶԻԿ - Ես որ անգիր գիտեմ: Անդրանիկս եկավ թե չէ՝ իրեն եմ տալու էդ անտեր հաստոցն ու վազելու եմ տուն: Վազելու եմ տուն ու Անդրանիկին ուղարկեմ շուկա: Նրա տունը չքանդվի, գիտեմ... չէ՞, շուկայից գալու է՝ ամեն մի արմունկից մի-մի կարգինկա լիքը, լիքը կախած, ձեռքերով էլ երկու մեծ-մեծ ձմերուկ բռնած: Ես էլ հո վրա չեմ տալու, հո չեմ փնթփնթալու:

- Էս ի՞նչ ես արել, այ տղա, այ աչքածակ, ագահ, Էսքան ապրանքը որ բերել ես, ես որտե՞ղ եմ պահելու, ո՞նց եմ սարքելու... Ուտողն ով է, այ տնաշեն... Փնթփնթալու եմ ու մտնեմ խոհանոց. լվանալու եմ, կտրտելու եմ, աղալու եմ, թակելու եմ, փաթաթելու եմ, խաշելու եմ, տապակելու եմ ու խորովելու եմ.. Մեծ սեղան եմ գցելու, սպիտակ սփռոցներով, դանակ-պատառաքաղները շարելու եմ...

ՄԻԲԱՆ - Ինձ էլ հյուր կկանչես, չէ՞, Նազիկ ջան...

ՆԱԶԻԿ - Վայ, ձեզանից փրկություն չկա՞ : Հրեն մարդդ էնտեղ, շուկան էլ էնտեղ, ձեզ համար բերեք սարքեք, էլի՞ ... Հո էտ էլ քարտով չի...

*(Ծիծաղում են)*

ԲԵՐՍԱԲԵ - Վայ, սիրելի Նազիկ, ես հենց այդ մասին էի ուզում ասել: Մենք, որ պատերազմի այս ծանր ահավոր տարիներին, այս մեծ փորձության ժամանակ կարողացանք չկորցնել մեր մարդկային դեմքը, կարողացանք մարդ մնալ, թիկունք դառնալ ռազմաճակատի համար, թիկունք դառնալ իրար համար, թիկունք... Կարողացանք ապրել և պահպանել-պահել, օգնել միմյանց, հասկանալ, կարեկցել ու հուսադրել իրար... Պատկերացնո՞ւմ եք, թե ինչպես կապրենք այն ժամանակ, պատերազմից հետո...

ՄԻԲԱՆ - Ախ, տեր աստված, ինչ օր կլինի դա...

ԲԵՐՍԱԲԵ - Պատկերացնո՞ւմ եք, թե ինչպես կապրեն մեր զավակները, այ հենց Տիգրանն ու Սաթիկը...

ՍԱԹԻԿ - Մրսեցի Տիգ...

ՏԻԳՐԱՆ - Վայ, գժվեցի՞ր...

ԲԵՐՍԱԲԵ - Նա, ով տեսել է այս ծանր օրերը, այլևս ուրիշ կերպ ապրել չի կարող խաղաղ օրերին, առատության մեջ...

ԼԻԶԱ - Ճիշտ է, ճիշտ է... մամա...

ԲԵՐՍԱԲԵ - Դա կլինի մի զարմանալի կյանք: Մարդիկ հաճույքով, սիրով կօգնեն իրար... որովհետև կունենան...

ՄԻԲԱՆ - Ասա, է, ասա, է... Որ չկա, ի՞նչ անես...

ԲԵՐՍԱԲԵ - Շատ ավելի ազնիվ կլինեն իրար նկատմամբ... Ստիպված չեն լինի շողոքորթել, խաբել, դավել ու նվաստանալ՝ ընտանիքը պահելու, մի կտոր հացի համար: Որովհետև՝ կունենան: Եվ մի մեծ արդարությամբ կլցվի աշխարհը: Արդարությամբ ու մաքրությամբ...

Եվ այն ժամանակ մենք կասենք, որ գուր չի եղել մեր տառապանքը:

ՍԻՐԱՆ - Մեր թափած արցունքը...

ՆԱԶԻԿ - Զոհերը...

ԲԵՐՍԱԲԵ - Եվ թող օրհնված լինի այդ ժամանակը...

*ՎԱՐԱԳՈՒՅՐ*

*1984 թ.*

*Երևան*